ԳՈՌ Հ. ԵՐԱՆՅԱՆ

ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԹՎԱՔԱՆԱԿՆ ԸՍՏ XV Դ. ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ

ԵՐԵՎԱՆ 2015

947.925 : 314
1323371

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳՈՌ Հ. ԵՐԱՆՅԱՆ

ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԹՎԱՔԱՆԱԿՆ ԸՍՏ XV Դ. ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ

(ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ա 105500

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ
136

ARCH. MESROB ASHJIAN BOOK SERIES
136

ԵՐԵՎԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
2015

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՏԴ 94 (479.25) : 314
ԳՄԴ 63.3 (5Հ) + 60.7
Ե 764

Նվիրվում է ընտանիքիս

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

խմբագիր՝ *Ա. Ա. Մելքոնյան*

Երանյան Գոռ Հ.

Ե 764 Հայ ընտանիքի անդամների միջին թվաբանակն ըստ XV դ. ձեռագրերի հիշատակարանների (Վասպուրականի օրինակով) / Գ. Երանյան. - Եր.: Պատմ. ինստ., 2015. – 99 էջ:

Գրքում փորձ է արվում XV դ. Վասպուրականի օրինակով ճշտելու հայկական ընտանիքի անդամների միջին թվաբանակը, ինչպես նաև սահմանվում են երեխաների ծնելիության ու մահացության ցուցանիշները: Անդրադարձ է կատարվում նաև ամուսնա-ընտանեկան մի շարք հարցերի, այդ թվում՝ տղաների և աղջիկների ամուսնության տարիքային շեմին:

Ներկայացված է նաև դարաշրջանի նշանավոր գործիչ Հակոբ Ղրիմեցու «Յաղագ Ազգականութեան» երկն ըստ Մատենադարանի թիվ 10137 ձեռագրի: Այն սահմանում է, թե ազգականների միջև քանի աստիճանից (սերտ) է սպառվում արյունը և որից բույլատրվում ամուսնությունը:

Նախատեսված է պատմաբանների և Հայոց պատմությամբ հետաքրքրվողների համար:

Հեղինակն օգտակար խորհուրդների և օգնության համար շնորհակալություն է հայտնում տց.գ.թ. Սամվել Մանուկյանին, պ.գ.թ. Վահե Թորոսյանին և ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ Նինետա Աղամյանին:

ՀՏԴ 94 (479.25) : 314
ԳՄԴ 63.3 (5Հ) + 60.7

ISBN 978-9939-860-24-4

© ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2015
© Երանյան Գ.

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՊԱՏՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

Հայկական պատմաժողովրդագրական դպրոցի ուսումնասիրությունների կիզակետում հիմնականում եղել է Հայկական լեռնաշխարհի այս կամ այն բնակավայրի էթնոժողովրդագրական նկարագրի բացահայտումը: Փորձ է արվել եղած տեղեկությունների հիման վրա ցույց տալ, թե տվյալ տարածքը կոնկրետ ժամանակում ի՞նչ էթնիկ տարրերով է բնակեցված եղել, և նրանցից ո՞րն է թվապես գերակշռել: Ներկայացվել են նաև էթնիկական տեղաշարժերը, բռնագաղթերը, բնակչության տեղաբաշխումը և այլն[1]*:*

Ի տարբերություն վերոնշյալի՝ եվրոպական և հատկապես ֆրանսիական պատմական ժողովրդագրության դպրոցը, ելակետ ունենալով պարզել XX դարում բնակչության կտրուկ աճի պատճառները, կարողացել է համակողմանիորեն ուսումնասիրել ու վեր հանել անտիկ ժամանակաշրջանի և հատկապես միջնադարի տարբեր շրջափուլերում բնակչության մոտավոր թվաքանակը, բնակչության աճի տեմպերն ու փոփոխությունները, պարզել ընտանիքի կազմը, ծնելիության և մահացության աստիճանը, մահացության պատճառ դարձած կամ միայն տվյալ պատմաաշխարհագրական շրջանում տարածված հիվանդությունները և այլն: Ժողովրդագրական վերոնշյալ

---

[1] Տե՛ս **Մելքոնյան Ա.**, Էրզրում. Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի առաջին երեսնամյակին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 1994: **Մուրադյան Հ.**, Կարսի նահանգի վարչաժողովրդագրական նկարագիրը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Երևան, 2006: **Ամիրջանյան Հ.**, Լոռին XVIII դարի վերջին և XIX դարի առաջին երեսնամյակին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 2010: **Ակոպով Ա.**, Տայք. վարչաժողովրդագրական պատկերը XVI դարից XIX դարի առաջին երեսնամյակը, Երևան, 2013:

գործընթացները դիտարկվում և քննվում են պատմական զարգացման համատեքստում[1]*:*

Նման ուսումնասիրություններն օգնում են պատկերացում կազմելու նաև լոկալ ու առօրեական պատմության մասին, հասկանալու տվյալ ժամանակաշրջանի մարդու զբաղմունքը, հոգսերը, մտածողությունը, հույզերը և այլն: Անցյալի բնակչության վերաբերյալ հետազոտություններում ֆրանսիական պատմաժողովրդագրական դպրոցը հիմնվում է միջնադարյան ծխական մատյանների[2] *ու վիճակագրական տվյալների, ինչպես նաև գերեզմանատներում ու դամբարանադաշտերում*[3] *կատարված պեղումների արդյունքների հիման վրա:*

Այս առումով Հայաստանի պատմական ժողովրդագրության միջնադարյան ժամանակաշրջանի պատմությունը գրեթե ուսումնասիրված չէ, ինչը սկզբնաղբյուրների սակավության հետևանք է: Սակայն դա բնորոշ է այդ պատմաշրջանի ոչ բոլոր ժամանակափուլերին: Ի տարբերություն ավատատիրության նախորդ երկու վաղ և որոշ չափով նաև զարգացած շրջանների, ուշ միջնադարը հարուստ է պատմական ժողովրդագրությանը վերաբերող սկզբնաղբյուրներով, որոնց շարքում առանցքային և անփոխարինելի նշանակություն ունեն հայերեն ձեռագրերի հիշատակարանները: Դրանք գլխավոր և երբեմն միակ սկզբնաղբյուրներն են, որ արյունակից հարազատների մասին հոկայական նյութ ամբարելով, հնարավո-

---

[1] Տե՛ս Étienne Gautier et Louis Henry, La population de Crulai, paroisse normande. Étude historique, Paris, PUF, 1958. Louis Henry et Michel Fleury, Des registres paroissiaux à l'histoire de la population. Manuel de dépouillement et d'exploitation de l'état civil ancien, Paris, INED, 1956. Isabelle Séguy, La population de la France de 1670 à 1829, L'enquête Louis Henry et ses données, Paris, 2001, INED-PUF. Louis Henry, Démographie. Analyse et modèles, Paris, 1984.

[2] Տե՛ս Étienne Gautier et Louis Henry, La population de Crulai, paroisse normande. Étude historique, Paris, PUF, 1958.

[3] Տե՛ս Djilalli Hadjouis, Mortalité infantile et enfantine et causes de mortalité. L'exemple de la nécropole médiévale d'Ivry-Parmentier 2 (Val-De-Marne, France), Bulletins et Memoires de la Societe d'antropologie de Paris, 1996, Vol. 8, N 1, pp. 15–26.

րություն են ընձեռում որոշ չափով հստակեցնել և ուրվագծել միջնադարյան հայ ընտանիքի մոտավոր կազմն ու ընտանիքի միջին մեծության գործակիցը:

Գրիչները, պատվիրատուները, նորոգողներն ու ընթերցողները ձեռագրի վերջում, երբեմն էլ երկու նյութերի բացատներում թողել են հիշատակագրություններ՝ ներկայացնելով գրչության ստեղծման հանգամանքները և ավանդելով պատմական մեծարժեք վկայություններ:

Սովորաբար, հայ մարդը, առաջնորդվելով հանդերձյալ կյանքի գոյության մասին քրիստոնեական աշխարհընկալմամբ, Ավետարան էր պատվիրում, որի վերջում թողած հիշատակագրությունում Աստծուց աղերսագին խնդրում էր ներել իր մեղքերը, իր ու իր հանգուցյալների հոգիներին թողություն տալ և արժանացնել երկնային կյանքի երանությանը: Հիշատակարանների հեղինակները՝ առաջին հերթին գրիչն ու ձեռագրի պատվիրատուն, դիմում էին նաև ընթերցողին ու խնդրում երկինք ուղղված աղոթքներում հիշել իրենց արյունակից հարազատներին՝ մեկ առ մեկ թվարկելով նրանց անունները: Այսպես՝ Խիզանում Հովհաննես գրիչը 1474 թվակիր Ավետարանի վերջում թողել է հետևյալ հիշատակարանը. «Արդ, որ ճաշակէք յաստուածային բուրաստանէս և յամենալիր սեղանոյս յիշեցէք ի Քրիստոս զերիս երանեալն և զառատասիրտն՝ զհաւատարիմ տանուտէրն զՍահակն, և զեղբայրն զԱտոմ, և կողակից[ք]ն նոցին՝ զԽաթուն և զԱնա, այլ և զաւակն իւրեանց զԱւետիս, և Բրրիւ, զԳրիգոր, զՅովանէսն, զԹուխմանուկն, մանաւանդ զդստերքն նոցին՝ զԽաթուն և զԽէրէք, և զՄարթա, և զԽոնձա, զՆօնօֆար, զՇուշան, զԽաթուն-Մէլէք, զԹամար» [1]:

---

[1] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Մասն երկրորդ (1451–1480 թթ.), Երևան, 1958, կազմեց Խաչիկյան Լ., էջ 367:

Ի տարբերություն ձեռագրի գրչի՝ պատվիրատուի ընտանիքի անդամների ու ազգականների անունները, որպես կանոն, արձանագրված են հիշատակարաններում: Ձեռագիրը գրելու կամ ընդօրինակելու երկար աշխատանքից հոգնաբեկ՝ գրիչը երբեմն կարող էր հիշատակարանում չարձանագրել իր ազգականների անունները, սակայն անվերապահորեն հիշում է պատվիրատուի ընտանիքի անդամներին ու արյունակից հարազատներին: Ի շարս արյան մերձավորների՝ հիշատակարանները հավերժացնում են նաև այն մարդկանց անունները, որոնք ձեռագիրն ընդօրինակելիս օգնության ձեռք են մեկնել գրչին՝ դրանով իսկ հարստացնելով ընտանիքի կազմի մասին մեր տվյալները: Հիշատակարանների բանաձևումներում նրանք ընդհանրական անվամբ կոչվում են երախտավորներ:

Այսպիսով՝ մեր ձեռքի տակ կան ընտանիքի անդամներին թվարկող հարյուրավոր հիշատակարաններ: Արդ, մեր առջև դրված խնդիրն է հիշատակարանների տեղեկությունների հիման վրա կարելվույն չափով պարզել, թե որքան է XV դ. հայ ընտանիքի (ծնողներ ու երեխաներ) միջին մեծության դրածակիցը Վասպուրականում:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԸՆԴԳՐԿՈՒՄԸ

Նկատի առնելով, որ մեզ զբաղեցնող հետազոտության արդյունքների արժանահավատությունը նախ և առաջ պայմանավորված է ընտանիքի կազմին վերաբերող սկզբնաղբյուրային տեղեկությունների քանակով, որպես ուսումնասիրության ժամանակափուլ ընտրեցինք XV դարը, որով թվագրվող հրատարակված հիշատակարանները, ի տարբերություն մյուս նախորդ և հաջորդ դարերի, ամենաբազմաքանակն են: Ակադեմիկոս Լևոն Խաչիկյանը տարիների տքնաջան աշխատանքի արդյունքում հավաքել և կազմել է XV դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների եռահատորյակը[1]:

XV դարով թվագրվող հիշատակարանների շարքում մեծ թիվ են կազմում Վասպուրականում գրվածները: Ընդ որում, Վասպուրական ասելով նկատի ունենք ոչ թե աշխարհացույցյան Հայաստանի մեծագույն նահանգը (օրինակ՝ չենք ներառել Նախճավանը), այլ Վանա լճի ավազանը, այդ թվում և Տուրուբերան նահանգի՝ լճին հարակից տարածքները, ինչպես նաև ավելի հարավ ընկած Մոկքը: Հենց այս վայրերն ավելի ուշ՝ օսմանյան տիրապետության ժամանակ, հայտնի էին հենց Վասպուրական անվամբ:

Անշուշտ, արդյունքների ճշգրտության տեսանկյունից նպատակահարմար կլիներ տարածական ընդգրկումը սահմանափակել միայն լեռնային ու դաշտային, կամ միայն քաղաքային ու գյուղական միջավայրով ու այն դիտարկել ավելի նեղ ժամանակահատվածում: Սակայն դա առավել կնվազեցներ

---

[1] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Մասն առաջին (1401–1450 թթ.), Երևան, 1955, Մասն երկրորդ (1451–1480 թթ.), 1958, Մասն երրորդ (1481–1500 թթ.), 1967, կազմեց Խաչիկյան Լ. (այսուհետ՝ ԺԵ դար, Մասն առաջին, Մասն երկրորդ, Մասն երրորդ):

քննության առարկա հիշատակարանների թվաքանակը: Բացի այդ՝ որոշ դեպքերում դժվար է պարզել, թե օրինակ՝ Աղթամարում գրված ձեռագրի պատվիրատուն արճեշցի՞ է, արծկեցի՞, թե՞ ոստանցի: Վերոգրյալի պարտադրմամբ քննել ենք Վասպուրականի ամբողջ տարածքում XV դարում գրված հիշատակարանները:

Վասպուրականից մեզ հասած ձեռագրերը գրվել կամ ընդօրինակվել են Աղթամարում, Լիմում, Կտուցում, Վարագում, Մեծոփավանքում և գրչության նշանավոր այլ կենտրոններում: Կան տասնյակ ձեռագրեր Վանից, Արծկեից, Արճեշից, Խլաթից, Աղբակից, Ռշտունիքից, Բերկրիից: Բազմաթիվ են նաև Մոկսի ու Խիզանի ձեռագրերը: Հիշատակարանների մի մասը գրվել է Վասպուրականի գյուղերում կամ էլ պատվիրատուն Վանի կամ Մոկքի այս կամ այն գյուղից է եղել: Ձեռագրի՝ գրչության նշանավոր կենտրոն Աղթամարում գրված լինելը դեռ չի նշանակում, թե դրա պատվիրատուն նույնպես կղզիաբնակ է: Այսպես՝ Աղթամարում 1445 թ. ընդօրինակված Մաշտոց ծիսարանի պատվիրատու Հովհաննեսը դավաշցի է[1]*: Այնուամենայնիվ, սխալված չենք լինի ասել, որ ցանկում ներկայացված բոլոր բնակավայրերում ապրող ընտանիքների մասին էլ առկա են տվյալներ:*

[1] ԺԵ դար, Մասն առաջին, էջ 579:

ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Մեզ միայն հատուկենտ դեպքերում է հայտնի դառնում հիշատակարաններում թվարկվածները միևնույն տանն են ապրում, թե՝ ոչ, քանզի հիշատակագիրը ծնողներից ու զավակներից բացի հաճախ թվարկում է նաև իր եղբայրներին ու քույրերին, փեսաներին, հորեղբայրներին, հորաքույրերին, մորեղբայրներին, վերջիններիս ընտանիքների անդամներին, կնոջ ազգատոհմին, ինչպես նաև իր ուսուցիչներին, համագյուղացիներին և այլոց: Հետևաբար, ճիշտ չի լինի առաջնորդվել այն սկզբունքով, թե տվյալ հիշատակարանում թվարկվող մարդիկ մեկ ընտանիք են կազմում:

Քննվող նյութի արդյունավետ ուսումնասիրության համար փորձենք գոնե հպանցիկ անդրադառնալ, թե ինչպես են վաղ միջնադարում ու հետագա հարյուրամյակներում արտահայտել ընտանիք գաղափարը. տիրապետող են եղել մե՞ծ, թե՞ փոքր ընտանիքները՝ չունենալով հսկայական ու խրթին թեմայի քննությունը սպառելու որևէ հավակնություն:

Ս. Հովհաննիսյանը պատմագրական սկզբնաղբյուրների և կանոնական օրենքների ուսումնասիրության հիման վրա ցույց է տվել, որ վաղմիջնադարյան Հայաստանում ընտանիք գաղափարն արտահայտվել է տուն, երդ, ծուխ և հենց ընտանիք բառերի միջոցով: Ընդ որում, ընտանիք բառի գործածությունն այս դարերում հաճախադեպ չէ, իսկ ահա տունն այն հիմնական բառն է, որ արտահայտել է ընտանիք իմաստը: Նշելով, որ գերդաստան բառը վաղ միջնադարում չի արտահայտել մեծ ընտանիք հասկացության իմաստը և չունենալով տվյալներ՝ Ս. Հովհաննիսյանը հակված է կարծելու, որ մեծ ընտանիքներ՝ գերդաստաններ, այնուամենայնիվ, քննվող ժամանակաշրջանում գոյություն ունեցել են: Նա չի բացառում, որ տուն հաս-

կացությունը փոքր ընտանիքից զատ արտահայտել է նաև մեծ ընտանիք իմաստը[1]: Տվյալ ժամանակաշրջանի համար օգտագործվել են նաև ազգ, տոհմ և ազգատոհմ բառերը:

Ս. Հովհաննիսյանի եզրակացությունը հետևյալն է. «Տիրապետող ձևը վաղ ֆեոդալական Հայաստանում եղել է ոչ բազմանդամ, փոքր անհատական ընտանիքը»[2]: Հենվելով Փավստոս Բուզանդի, Զենոբ Գլակի ու Հովհան Մամիկոնյանի հաղորդած կցկտուր տեղեկությունների վրա՝ նա ենթադրում է, որ քաղաքաբնակ ընտանիքը բաղկացած է եղել 5–6 հոգուց, իսկ գյուղական համայնքներում ընտանիքի անդամների թիվը 1–2-ով ավելի է եղել քաղաքայիններից[3]:

Վերադառնանք հայերեն ձեռագրերի հիշատակարաններին: Թվարկելով ծնողներին, եղբայրներին ու զավակներին՝ գրիչները, որպես կանոն, հիշատակարանի վերջում խնդրում են հիշել իրենց բոլոր ազգականներին: Այդ պարագայում գրիչներն գործածում են՝ «ըստ մարմնոյ ազգականք», «համաւրէն ազգականք», «զազգայինս մեր զամենեսեանք», «զամենայն ազգայինք», «զազգայնոցն ամենեցուն», «բնաւ ազգայինք», «ազգ», «զազգաինք իմ», «զամենայն ազգատոհմ», «հանդերձ զարմով», «զամենայն զարմ», «զարենառու մերձաւորք», «զամենայն արեան մերձաւորք» արտահայտությունները: Դրանք կազմված են ազգ, զարմ ու տոհմ բառերից ու ոչ թե արտահայտում են ընտանիք հասկացություն-գաղափարի իմաստը, այլ միտված են հիշատակելու բոլոր՝ հեռու և մոտ, կենդանի և հանգուցյալ ազգակիցներին: Տարբերություն կարելի է նկատել միայն ազգ, զարմ և «արեան մերձաւոր» եզրերի միջև, քանզի

---

[1] Տե՛ս Հովհաննիսյան Ս. Հ., Ընտանիքի ձևերը, կազմը և ֆունկցիաները վաղ ֆեոդալական Հայաստանում, «Պատմա-բանասիրական հանդես», 1973, N 1, էջ 195–207:

[2] Նույն տեղում, էջ 200: Այդ տեսակետին է նաև Է. Կարապետյանը: Ըստ նրա՝ վաղ ավատական Հայաստանում հասարակության տնտեսական բջիջը փոքր ընտանիքն էր: Տե՛ս Карапетян Э. Т., Родственная група «Азг» у армян, Ереван, 1996, стр. 6.

[3] Տե՛ս Հովհաննիսյան Ս. Հ., նշվ. աշխ., էջ 200–201:

առաջին երկուսը, կարծես, արտահայտում են հայրական կողմի արյունակիցների համախումբը, իսկ «արեան մերձաւորները» բոլորին, ներառյալ՝ մայրական կողմը[1]*:*

XIV–XV դդ. հայերեն ձեռագրերի հիշատակարաններում մեզ չեն հանդիպել երդ ու ծուխ բառերն ընտանիք իմաստի կիրառությամբ, իսկ ահա օջախ (օճախ) բառը՝ տուն, գերդաստան, զարմ, ազգատոհմ նշանակությամբ մեկ անգամ վկայված է XV դ. հայերեն ձեռագրերի հիշատակարաններում[2]*: Հավանաբար թուրքերենից փոխառյալ օջախ*[3] *բառը բանավոր խոսքում օգտագործվել է դեռ այն ժամանակներից, սակայն հիշատակարաններին բնորոշ չափից դուրս պահպանողական լեզվում այս բառի գործածությունը հաճախադեպ չէ:*

Այլ է տուն բառի պարագան. մատենագրական վկայությունները փաստում են, որ տուն բառը գործածական է եղել ընտանիք իմաստով: XV դ. և նախորդող հարյուրամյակների հիշատակարաններում մեզ չի հանդիպել նաև գերդաստան բառը: Անցնենք ընտանիք բառի քննությանը:

Ընտանիք բառի ստուգաբանությունը պարզորոշ ցույց է տալիս, որ այն մի հարկի տակ ապրողների՝ ընտանիների համախումբն է: Մեր կարծիքով՝ գերդաստան-ընտանիք տարանջատումը բնորոշ է նոր ժամանակներին՝ XIX և XX դարի սկիզբ, և

---

[1] 1474 թ. գրված հիշատակարաններից մեկը հստակ տարբերակում է դնում ազգի և արյան մերձավորների միջև. «Այլ և զազգն ամենայն և զամենայն արեան մերձաւորսն նոցա», ԺԵ դար, Մաս երկրորդ, էջ 367: Նույն տարանջատումը կարելի է տեսնել նաև 1489 թ. մի հիշատակարանում. «Զամենայն ազգականս և զամենայն արեան մերձաւորքն», ԺԵ դար, Մասն երրորդ, էջ 131:

[2] ԺԵ դար, Մասն երկրորդ, էջ 356: Ուշադրություն պետք է դարձնել, որ այս հիշատակարանը, ամենայն հավանականությամբ, գրվել է Զեյթունում: Կիլիկիայում թյուրքախոս բնակչությունը նշյալ ժամանակաշրջանում ավելի մեծաթիվ է եղել, քան մեզ հետաքրքրող տարածաշրջանում՝ Վասպուրականում:

[3] Տե՛ս **Ղազարյան Ռ. Ս., Ավետիսյան Հ. Մ.**, Միջին հայերենի բառարան, Երևան, 2009, էջ 824:

խորթ՝ միջնադարին[1]: Ընտանիք եզրը լիարժեքորեն արտահայտել է ընտանիների՝ նույն հարկի տակ ապրելու իրողությունը, իսկ գերդաստան բառի կարիքը զգացվել է այն ժամանակ, երբ նահապետական ընտանիքները սկսել են քայքայվել: Մասնագիտական բառարանները որպես ընտանի բառի առաջնային իմաստ նշում են նույն տանն ապրողին[2], տան մարդուն, տնեցուն[3], տնայինին[4]: Հայերի ընտանիքներում երբեմն նույն տան մեջ ապրում էին պապից մինչև ծոռ, եղբայրներն իրենց կանանցով ու ամուսնացած որդիներով: Ըստ երևույթին, այս պատճառով էլ ընտանին, պահպանելով նախնական նշանակությունը, ընդլայնում է իր իմաստային դաշտը՝ դառնալով ազգական բառի հոմանիշ[5]: Բառարաններում որպես ընտանի բառի երկրորդ իմաստ նշվում է հենց ազգականը, մերձավորը, հարազատը: Այս պայմաններում մեր գործը դժվարանում է. դառնալով ազգական բառի հոմանիշ՝ ընտանի եզրի տակ արդյո՞ք պետք է ենթադրել միևնույն տան մեջ ապրողին, թե՝ ոչ: Այսպես՝ XII դ. հիշատակարաններից մեկում Հայրապետ գրիչը, թվարկելով Ստեփանոսի ծնողներին, քույրերին ու եղբայրներին, խնդրում է հիշել նաև «զհամաւրէն զամենայն զընտանիսն

---

[1] Ե. Լալայանը, խոսելով XIX դ. վերջի Սիսիանի մասին, գրում է. «Սիսիանում այլևս չկան նախկին բազմանդամ գերդաստանները. այժմեան ամենաբազմանդամ ընտանիքը, որ իւրաքանչիւր գիտում հազիւ երկու երեք հատ է պատահում՝ բաղկանում է 20–05 հոգուց», (ընդգծումը՝ Գ.Ե.): Տե՛ս Լալայեան Ե., Սիսիան, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1898, N 1–2, էջ 233:

[2] Մալխասեանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, հ. 2, Երևան, 1944, էջ 67:

[3] Գաբամաճեան Ս., Նոր բառգիրք հայերէն լեզուի, Կ. Պոլիս, 1910, էջ 499:

[4] Անդրանիկ Վրդ. Կոսեան, Բառգիրք հայերէն լեզուի, Պէյրութ, 1998, էջ 133: «Բառգիրք Հայկազեան լեզուի»-ն «ընտանի»-ն բացատրում է որպես «ի տան եղեալ» ու նշում ոչ միայն տանը բնակվող ազգականներին, այլև՝ ծառաներին (տե՛ս Բառգիրք Հայկազեան լեզուի, հ. 1, Կոստանդնուպոլիս, 1844, էջ 436): Տե՛ս նաև Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Երևան, 1979, էջ 784:

[5] Ընտանիք բառը ճիշտ նույնատիպ իմաստային զարգացում է ապրել նաև հունարենում (տե՛ս Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևան, 1973, էջ 132): Շնորհակալություն լեզվաբան Հրաչ Մարտիրոսյանին հուշումի համար:

իւր»[1]: Մեզ անհայտ է մնում՝ Ստեփանոսն ապրե՞լ է իր քույրերի ու եղբայրների հետ միևնույն տանը և, բացի այդ, տանը եղե՞լ են նաև այլ ազգականներ, թե՞ պարզապես ընտանի բառի հոգնակին՝ ընտանիքը, կիրառվել է արյունակից հարազատներին թվարկելու համար: Ընտանի(ք) բառը հանդես է գալիս նաև ավելի ընդհանրական առումով՝ հակադրվելով օտարին, թշնամուն. «Նեղիմ յընդանեաց՝ իբր ի թշնամեաց, և վշտագնիմ ի սիրելեաց, իբր յատելեաց»[2], մեկ այլ դեպքում՝ «Զունիք ոք հրաման ոչ աւտարք, ոչ ընտանիք»[3]:

Այնուհանդերձ, ընտանին, հավատարիմ իր սկզբնական նշանակությանը, շարունակում է արտահայտել նաև միևնույն տան մեջ ապրողներին: Դա է փաստում Թովմա Մեծոփեցու հետևյալ անգնահատելի վկայությունը՝ «ընտանեոք տան»[4]:

Թեև, ինչպես տեսանք, հայերեն ձեռագրերի հիշատակարաններում ընտանիք բառի՝ որպես մի տան անդամների, արյունակից հարազատների համախումբ նշանակությամբ կիրառությունը հաճախադեպ չէ, սակայն եղած հիշատակությունները բավարար են պնդելու, որ այդ բառը գործածական է եղել մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում: Ընտանիք բառը վկայված է XIII դ. մի քանի հիշատակարաններում՝ («Հանդերձ ծնողիւք իւր եւ համայն ընտանեւավք», «ծնողաւք և ընտանեաւք մեր»[5]: 1309 թ. Կիլիկիայում Ստեփանոս գրիչը հիշում է Զապելին, նրա զավակներին ու ծնողներին և ավելացնում՝ «համայն ընտա-

---

[1] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դդ., աշխատասիրությամբ Մաթևոսյան Ա., Երևան, 1988, էջ 238:

[2] ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Մաթևոսյան Ա., Երևան, 1950, էջ 643 (այսուհետ՝ ԺԳ դար):

[3] Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. 1, Երևան, 1984, էջ 1062:

[4] Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, աշխատասիրությամբ Խաչիկյան Լ., Երևան, 1999, էջ 192:

[5] ԺԳ դար, էջ 563, 607:

նեաւք և ամենայն ընաւին զարմիւք»[1]: XVI–XVIII դդ. նույնպես կիրառվում է ընտանիք բառը՝ «Աստուած զինքն եւ զիւր ընտանիքն օրհնէ»[2], մեկ այլ դեպքում՝ «եկի գիւղն Վրժան ընտանեօք իմոք[3], նաև՝ «հանդերձ ամենայն ընտանեօք եւ ստհասարակ ամենայն ժողովրդեամբ»[4]: Ընտանի(ք) և տուն բառերը կողք կողքի են գործածվում նաև XV դ. ձեռագրերից մեկում. «Եւ՛ ի տանէ, և՛ ի յընդանեաց բաժանեցաւ»[5]: Հիշատակարաններում ընտանիք բառի սակավ գործածությունը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ գրիչները նպատակ ունեին հիշատակելու ոչ թե ընտանիքին, այլ իրենց ազգին: Հիշատակարաններում ընտանիք բառի սակավ գործածության բացը լրացնելուն մեծապես օգնում է Հակոբ Ղրիմեցու «Յաղագս ազգականութեան» աշխատությունը (XV դ.), որտեղ մեկ հարկի տակ ապրող արյունակից հարազատների համախումբ նշանակությամբ կիրառվում է միմիայն ընտանիք եզրը:

Հակված ենք կարծելու, որ ընտանիք և տուն նույնարմատ[6] բառերն արտահայտել են մեկ հարկի, միևնույն տան մեջ ապրողներին առհասարակ: Թե՛ հիշատակարանները և թե՛ մատենագրական այլ վկայություններն ուղղակի և անուղղակի հավաստում են, որ XV դ. Վասպուրականում եղել են թե՛ փոքր՝ միաբջիջ, թե՛ մեծ ընտանիքներ:

Ուշադրություն պետք է դարձնել նաև XI դ. հետո Մեծ Հայքի հարավային՝ Վասպուրական, Մոկք և Կորճայք նահանգներում տեղի ունեցած ժողովրդագրական տեղաշարժերին: Հայաստան ներթափանցած քրդական ցեղերը հայերին ստի-

---

[1] ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Խաչիկյան Լ., Երևան, 1950, էջ 59 (այսուհետ՝ ԺԴ դար):

[2] Տե՛ս Մեսրուպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. Հ^ԿԴ 5757, էջ 86ա:

[3] Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. 1, էջ 336:

[4] Նույն տեղում, էջ 854:

[5] ԺԵ դար, Մասն երկրորդ, էջ 144:

[6] Տե՛ս Աճառյան Հ., էջ 132:

պում են թողնել Հայկական Տավրոսի լեռնային շրջանները և չարժվել հյուսիս: Քրդերի կողմից լեռնային արոտավայրերի յուրացումը հայերին հարկադրում է զբաղվելու հիմնականում երկրագործությամբ: Հողագործական աշխատանքներն իրենց հերթին պահանջում էին աշխատուժի համախմբում, փոխօգնության ու համակեցության նոր կանոնների մշակում: Դրան գումարվում էր նաև անվտանգ ապրելու պահանջը, քանի որ թալանն ու ավարառությունը հարևան քրդերի համար ապրուստ հայթայթելու միջոց էին: Հետագայում այս տարածքներով անցնող եվրոպացի ճանապարհորդներից մեկը, հանդիպելով իրեն կողոպտելու մտադրություն չունեցող մի քրդի, զարմանքով նշում է, որ թեև քուրդ էր, սակայն չէր ապրում ավազակությամբ[1]: Ավարառություն, կողոպուտ ու քուրդ բառերը ձեռք են բերում համագոր նշանակություն:

Նույնիսկ այս պայմաններում դժվար է ասել՝ ընտանիքները մի հարկի տակ են ապրել, թե պարզապես դրկիցներ են եղել: Վ. Պետոյանը գրում է, որ օրինակ Սասունում հարևան ընտանիքներն սովորաբար արյունակիցներ էին: «Այստեղի գյուղական թաղերում բնակվում էին ազգակցական-արենակցական սերտ կապերով իրար հետ կապված ընտանիքները, որպեսզի տնտեսական և պաշտպանական գործերում իրար օգնեին»[2]: Նույնը ակնարկում է Գ. Հալաջյանը Դերսիմի որոշ գյուղերի մասին[3]: Այս պայմաններում հնարավոր է, որ ընտանիքները միասին են ապրել, սակայն չի կարելի բացառել, որ տները բաժանված են եղել միայն մեկ պատով: Այն, որ գրեթե բոլոր հիշատակարագիրները խոսում են իրենց ազգի մասին, վկայում է

---

[1] Աղբյուրներ Հայաստանի յեվ Անդրկովկասի պատմության, Հակոբյան Հ., Ուղեգրություններ. հ. 2, Յերեվան, 1934, էջ 224:

[2] Պետոյան Վ., Սասնա ազգագրությունը, Երևան, 1965, էջ 230:

[3] Հալաջյան Գ., Դերսիմի հայերի ազգագրությունը, «Հայ ազգագրություն և բանահյուսություն», հ. 5, Երևան, 1973, էջ 201:

ազգականների՝ միասին կամ անմիջական հարևանությամբ ապրելու և համայնական աշխատանքի գոյության մասին:

Մեր նպատակն է պարզել ընտանիքի (ծնողներ ու երեխաներ) միջին մեծության գործակիցը, որը հնարավորություն կտա պատկերացում կազմելու նաև ավելի մեծ ընտանիքի մասին:

ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇԵՐՏԱՎՈՐՈՒՄԸ

Արդյո՞ք հայության բոլոր հատվածները ձեռագիր պատվիրելու միջոցներ ունեին. չէ որ պատվիրողը պետք է որոշակի գումար վճարեր իր գործի վարպետ գրչին, որպեսզի վերջինս ընդօրինակեր պահանջվող ձեռագիրը՝ Ավետարանը, Մաշտոցը, Ճաշոցը, Նարեկը և այլն: Լևոն Խաչիկյանը կարծիք է հայտնում, թե ձեռագիր ստանալու համար պահանջվել են մեծ ծախքեր, ուստի և պատվիրատուները եղել են «հիմնականում առևտրականներ, ցածրաստիճան հոգևորականներ և ունևոր գյուղացիներ»[1]: Այս մտքից չի կարելի արտածել, թե մեր տվյալները վերաբերում են միայն առավել ապահովված ընտանիքներին: Պետք է հաշվի առնել, որ հայերեն ձեռագրերի հիշատակարաններն ավանդում են նաև պատվիրատուի բազում հարազատների անունները, ինչը հնարավորություն է տալիս ընդգրկուն պատկեր ստանալ՝ ներառելով հայության բոլոր շերտերը:

Թեպետ ուղղակի տեղեկություններ չունենք, սակայն տպավորություն է ստեղծվում, որ պատվիրատուներն Ավետարան ձեռք բերելու նպատակով երկար ժամանակ գումար են տնտեսել, նաև պարտք վերցրել: Այսպես՝ Ավետարան գնելու համար երևանցի Հակոբին օգնել, ամենայն հավանականությամբ, փող է տվել իր զոքանչը[2]: Հարկ եղած դեպքում մարդիկ նաև վաճառել են Ավետարանը: Թադևոս քահանան, որը, ըստ երևույթին, անզավակ էր, մահանում է: Եղբորորդին՝ Մարտիրոսը, հայերի ու մուսուլմանների վկայությամբ 600 դահեկա-

---

[1] Լ. Խաչիկյանը գրում է. «Ձեռագրերի արժեքի մասին հիշատակարաններում կան մի շարք տվյալներ: Ըստ մեծության ու արտաքին ձևավորման տարբեր գներով են վաճառվել ձեռագրերը: Եղած տվյալների համեմատությունից կարելի է եզրակացնել, որ միջին արժեքի ձեռագիրը վաճառվել է 500–1000 սպիտակով (արծաթ դրամ), չնայած եղել են այնպիսիները, որոնց գրության համար ծախսվել է 2300 և ավելի սպիտակ» (տե՛ս ԺԴ դար, էջ XIV):

[2] ԺԵ դար, Մասն առաջին, էջ 49:

Ա105500

նով վաճառում է հորեղբոր Ավետարանը և հոգեհաց տալու նպատակով գնում մի կով ու մի եզ[1]:

Ավելին, մարդիկ, երեխաների մահը վերագրելով իրենց գործած մեղքերին, Ավետարան էին պատվիրում՝ հավատով, որ այն կօգնի զերծ մնալ տարատեսակ չարիքներից, տարաբախտություններից ու փորձանքներից: Ավետարան ունենալը կարծես դառնում էր կյանքի նպատակ: Հիշատակարաններում վկայություններ կան այն մասին, որ մայրը մահացած որդու տեղը լրացնելու համար Ավետարան է պատվիրում («իմ զաւակին փոխան եմ եղեր»[2]):

Այնուհանդերձ, ձեռագրերի պատվիրատուները հիմնականում գյուղական ու քաղաքաբնակ քահանաներն են, տանուտերեր, խոջաներ, գյուղացիներ, արհեստավորներ՝ հյուսն, դարբին և այլն: Աչք է զարնում, որ տանուտերերն ու խոջաները բազմազավակ են: Աղթամարում 1452 թ. գրված Ավետարանի պատվիրատու Մկրտիչն ունեցել է 5 տղա: Տանուտերերից Հովհաննեսն ունեցել է 2 տղա և 3 աղջիկ, Առաքելը՝ 3 տղա և 4 աղջիկ, արծկեցի Ստեփանոսը՝ 5 տղա և 1 աղջիկ, իսկ Կարապետը՝ 4 տղա ու 2 աղջիկ: Խիզանից «աղքատասեր խոջա» Դամուրն ունեցել է 5 տղա և 2 աղջիկ, իսկ վանեցի խոջա Խդրշահը՝ 3 տղա ու 4 աղջիկ: Հյուսն Պողոսն էլ ունեցել է 11 երեխա՝ 4 տղա և 7 աղջիկ:

Պատվիրատուներից շատերը՝ թե՛ աշխարհական, թե՛ հոգևորական, մուղդուսի-մահտեսիներ են. նրանք այդ պատվանունը վաստակել են Երուսաղեմ ուխտագնացության մեկնելու համար: Այդքան ճանապարհ կտրելն իսկ պահանջում էր ֆինանսական որոշակի միջոցներ, ուստի մահտեսիներին էլ կարելի է դասել ժողովրդի քիչ թե շատ ունևոր հատվածի շարքերը:

---

[1] Նույն տեղում, էջ 160:

[2] ԺԵ դար, Մասն երկրորդ, էջ 144:

ԱԶԳԱԿԱՆՆԵՐԻ ԹՎԱՐԿՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Հայերեն ձեռագրերի հիշատակարաններում գրիչը մերթ ավանդում է պատվիրատուի ծնողների, մերթ նրա երեխաների անունները, երբեմն էլ ստացողի ծնողների ու որդիների հետ միասին հիշատակում նրա եղբայրներին, քույրերին, հորեղբայրներին, քեռիներին, հորաքույրերին, մորաքույրերին ու նրանց բոլորի զավակներին և այլն:

Այնուամենայնիվ, հայերեն ձեռագրերի հիշատակարաններում հիմնական արյունակից հարազատների թվարկման հաջորդականությունը հարափոփոխ չէ, թեև երբեմն ընդունված կարգից շեղումներ լինում են: Գրիչը նախ և առաջ հիշատակում է պատվիրատուին, որը հիմնականում արական սեռի է, այնուհետև՝ ծնողներին ու կնոջը: Թեպետ հազվադեպ, բայց կան նաև մեծ հոր ու մեծ մոր մասին վկայություններ:

Ընդ որում՝ հատկապես հոգևորականների շրջանում ինչպես ծնողների, այնպես էլ եղբայրների պարագայում առանձնացնում են ծնողներ կամ եղբայրներ «ըստ մարմնոյ» և «ըստ հոգւոյ»: Մարմնավոր ծնողն ու եղբայրն իր արյունակիցներն են, հոգևոր ծնողը՝ ուսուցիչը, գրչությունն սովորեցնողը, վանահայրը, հոգևոր եղբայրը՝ համախոհը, միևնույն վանքի հոգևորականը:

Եթե հիշատակագիրն ունի երեխաներ, թվում է նրանց անունները: Երբեմն առաջնայնությունը տրվում է մերթ երեխային, մերթ եղբորը: XIV և XV դդ. հայերեն ձեռագրերի հիշատակարանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հիշատակագիրներն անպայման նշում են իրենց եղբորը՝ հա-

ճախ երկրորդելով որդիներին: Ուշագրավ է, որ շատ հաճախ հիշատակագիրները եղբայրներին թվարկելուց հետո են միայն հիշում բոլոր ազգականներին («զազգաինք իմ», «զամենայն ազգատոհմ», «զամենայն արեան մերձաւորք»)՝ կարծես նրանց դիտելով ոչ թե ազգի մեջ, այլ սեփական ընտանիքում:

Եթե հորաքույրերի ու մորաքույրերի հիշատակման մեջ դժվար է զանազանություն նշմարել, ապա, ի տարբերություն քեռիների, հորեղբայրների ու նրանց որդիների հիշատակությունները հաճախադեպ են: Այս իրողությունը հնարավոր է բացատրել միևնույն հարկի տակ կամ հարևանությամբ ապրելու հանգամանքով: Երբեմն հիշատակագիրներն ավանդում են իրենց փեսաների, զոքանչների, անեղների, տեգրերի, խորթ մոր, խորթ հոր, նախկին կնոջ, կնքահոր անուններ, թվարկում տասնյակ քահանաների, խնդրում հիշել գյուղի բոլոր բնակիչներին:

Ընդ որում, շարունակվում է անվանակոչության հնավանդ սովորությունը. հայերեն ձեռագրերի հիշատակարաններում կարելի է հանդիպել անվանակից պապ ու թոռան մասին բազմաթիվ վկայությունների: Շատ են դեպքերը, երբ հայրը որդուն կոչում է իր մահացած եղբոր անունով: Տղա երեխաների տարաժամ մահվան հաճախակիությամբ պայմանավորված՝ ընդունված էր նաև նորածնին կոչել մահացած եղբոր անունով:

Հիշատակարաններում խոսվում է նաև բազմաթիվ կուսակրոն քահանաների մասին, որոնք, բնականաբար, չէին ամուսնանում՝ մնալով անժառանգ: Տեղեկություններ են պահպանվել նաև միայնակյացների մասին, որոնք հրաժարվում էին ամուսնությունից ու մենակյաց կյանք վարում: Վասպուրականի Աղեթ գյուղից հյուսն Հովհաննեսը, որն ուներ 2 եղբայր ու 2 քույր, որոշում է չամուսնանալ ու դառնալ միայնակյաց: Ընդ որում, նա գովեստի խոսքերի է արժանանում. «Ոչ ունէր

զաւակ մարմնաւոր, զի միակեց էր և անախտ ի մարմնական ամուսնութենէ»: Հովհաննեսի մասին, որը Ճաշոց է պատվիրել, ըստ երևույթին, քրիստոնեական տոներին ու ծիսակարգին հավուր պատճաշի հետևելու մտադրությամբ, Կարապետ աբեղան գրում է. «Էր նա անկին և անտուն, վարուքն մաքուր և ողջախոհ, անբամբաս և անպարսաւ ի բասրանաց մարդկան»[1]*:*

[1] ԺԵ դար, Մասն առաջին, էջ 250:

ԱՂՋԻԿՆԵՐԻ ՈՒ ՏՂԱՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Միջնադարյան ձեռագրերի հիշատակարանների ուսումնասիրությունից ակնառու է դառնում, որ եթե հիշատակագիրները փութաջանորեն նշում են իրենց որդիներին, ապա նույն համառությամբ հաճախ լռում, շրջանցում ու պարզապես չեն թվարկում աղջիկներին: Իրականության հետ որևէ աղերս չի ունենա հետևությունը, թե տղաների համեմատությամբ աղջիկները քիչ էին ծնվում: Երբեմն գրիչը երեք-չորս հիշատակարաններում լռում է աղջկա մասին, սակայն հինգերորդում ավանդում նրա անունը: Սա այն պարագայում, երբ բոլոր դեպքերում մեզ հայտնի են տղաների անունները: Ավելին, երբեմն նախընտրում են նշել փեսայի անունը, սակայն չեն հիշատակում ո՛չ քրոջը, ո՛չ էլ դստերը:

Ձեռագրում աղջկա անունը չհիշատակելու իրողությունը պայմանավորված էր հետևյալ հանգամանքներով՝ ա. ավանդական երկրագործական ընտանիքում տղաների դերի կարևորմամբ, բ. հայրական ունեցվածքը ժառանգելու և ծնողներին խնամելու տղաների պարտականությամբ, գ. աղջիկների ամուսնությամբ. դուստրը վաղ տարիքում կարող էր լքել հայրական տունը և կնության գնալ՝ մաս կազմելով մի այլ ընտանիքի: Մեծ դեր էր խաղում աղջիկների մասին միջնադարյան մտածողությունը (միջնադարի ավանդական պատկերացմամբ՝ նրանք ի ծնե մեղսակիր էին), գործում էր նաև ներքին արգելանքը՝ նախապաշարվածությունն ու կաշկանդվածությունը:

Մոկսի Փասավանք գյուղում գրված ձեռագրերից մեկը լավագույնս ի ցույց է դնում աղջիկ-տղա տարբերության աստիճանը: Ծերունի Աստվածատուրն ու իր կին Եղիսաբեթը վշտացած էին. նրանք թեպետ ունեին երկու դուստր, սակայն չու-

նեին արու զավակ, և ահա թե ինչպես է գրիչը պատկերավոր ներկայացնում նրանց վիճակը. «Ոչ ունէին զաւակ արու, որ մխիթարէին յայսմ աշխարհիս, և կային հանապազ տրտում»[1]:

Հ. Ղրիմեցին «Յաղագս ազգականութեան» երկում գրում է, որ եթե երկու եղբայրներ նույն հորից և տարբեր մորից են, ապա հարազատ եղբայրներ են, իսկ եթե երկու հորից ու մի մորից՝ ոչ: Հ. Ղրիմեցին դա բացատրում է հետևյալ կերպ. «Զի կինն կէս է»[2]:

Այնուամենայնիվ, հիմք չունենք ենթադրելու, թե միջնադարում հայ կինը մշտապես խտրական վերաբերմունքի էր արժանանում՝ զրկված լինելով ամեն տեսակ իրավունքներից՝ ինչպես ընդունված է կարծել Արևելքի կնոջ պարագայում: Դարաշրջանի որոշ հիշատակարաններ վկայում են, որ կանայք երբեմն ամուսնացել են մեկից ավելի անգամ: Մխիթար Գոշի «Դատաստանագրքում» ամրագրված է կնոջ երկրորդ ամուսնության իրավունքն ու թվարկված են բոլոր այն դեպքերը, որոնք կնոջը հնարավորություն էին ընձեռում երկրորդ անգամ ամուսնանալու[3]: Հիշատակարաններում խնդրո առարկա նյութի քննությունը փաստում է, որ կնոջ երկրորդ ամուսնության հիմնական պատճառն ամուսնու վաղաժամ մահն է, ինչը հազվադեպ երևույթ չէր մեզ հետաքրքրող դարաշրջանում:

Հիշատակագիրը կարող էր չնշել սեփական դստերը, բայց ոչ երբեք կնոջը: Հետևաբար, ամուսնանալուց հետո ընտանիքում աղջկա դերը մեծանում էր: Կանայք նույնպես պատվի-

---

[1] ԺԵ դար, Մասն երկրորդ, էջ 75:

[2] Տե՛ս Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. Հ՝ 10137, էջ 284ա:

[3] Տե՛ս **Ադոյան Ա. Գ.**, Հայկական ամուսնա-ընտանեկան հարաբերությունները միջնադարյան օրենքներում, «Պատմա-բանասիրական հանդես», 1965, N 3, էջ 49–65: Ա. Ադոյանը, ուսումնասիրելով կնոջ վերաբերյալ Գոշի մոտեցումը, հանգում է հետևյալ եզրակացությանը. «Գոշը հաստատ համոզված էր, որ կինը թերարժեք էակ է, և որ նրան աստվածն է այդպես ստեղծել»: Թեմայի վերաբերյալ տե՛ս նաև **Բարխուդարյան Ս. Գ.**, Հայ կնոջ իրավական վիճակը միջին դարերում, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, N 2, էջ 25–40:

րում էին բազմաթիվ ձեռագրեր: Տղամարդիկ նաև գովեստի խոսքեր էին հղում կանանց հասցեին. գրիչը, անտարակույս, արճեշցի Գրիգորի համաձայնությամբ, նրա կնոջը՝ Ազիզ Խաթունին, անվանում է «բարի ամուսին և թագուհի»: Ստեփանոս գրիչն էլ, դարձյալ պատվիրատուի ցանկությամբ, Հովհաննեսի կնոջը կոչում է «համեստագոյն կենակից»:

ՏՂԱՆԵՐԻ ԵՎ ԱՂՋԻԿՆԵՐԻ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՇԵՄԸ

Աղջիկների և տղաների ամուսնության տարիքային չեմի ուսումնասիրությունը հնարավորություն կտա պատկերացում կազմելու, թե երբ են աղջիկները հեռացել հայրական ընտանիքից, իսկ տղաները՝ հաբս բերել:

IV–V դարերում Հայաստանում դեռևս կենսունակ էին հեթանոսական ժամանակաշրջանում տիրապետող բարքերն ու սովորությունները, ուստի զարմանալի չէ Ս. Հովհաննիսյանի եզրակացությունը, ըստ որի՝ վերոնշյալ դարերում ամուսնական չափահասության նվազագույն տարիքը տղաների և աղջիկների համար համապատասխանաբար եղել է 12-ը և 11-ը[1]: Նա կարծում է, որ տղաների համար ամուսնության չեմի 15 տարեկանի սահմանումը շրջանառության մեջ է մտել VIII–IX դդ.[2]:

Հավատարիմ եկեղեցու ավանդական դիրքորոշմանը՝ քննվող ժամանակաշրջանին ավելի մոտ կանգնած հեղինակ-

---

[1] **Հովհաննիսյան Ս. Հ.**, Ամուսնա-ընտանեկան իրավունքը վաղ ավատական Հայաստանում (IV–IX դդ.), Երևան, 1976, էջ 196: «Կանոնագիրք Հայոց»-ում տեղ են գտել վաղ ամուսնությունն արգելող մի շարք կանոնական օրենքներ: Այդպիսի կանոն է սահմանել նաև Սահակ Պարթևը (տե՛ս «Կանոնագիրք Հայոց», հ. 1, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Երևան, 1964, էջ 382): Եթե Սահակ Պարթևը քահանաներին պատվիրում էր պսակ չդնել «մինչեւ ի կատարումն հասակի», սակայն հստակ տարիքային շեմ չէր նշում, ապա Դավիթ Ալավկաորդին սահմանում էր. «Այլ զփոքրագոյն մանկունս մի՝ որ ի քահանայից յանձն առցէ հարսանեաց պսակ դնել նոցա մինչեւ յերկոտասան ամն, որ ճանաչեն զաջն և զահեակն» (տե՛ս **Դաւիթ Ալաւկա որդի**, Կանոնական Աւրէնսդրութիւն, Մատենագիրք Հայոց, հ. ԺԶ, Երեւան, 2012, էջ 715):

[2] **Հովհաննիսյան Ս. Հ.**, Ամուսնա-ընտանեկան իրավունքը վաղ ավատական Հայաստանում (IV–IX դդ.), էջ 193:

ներ Հովհաննես Երզնկացին[1] (XIII դ.) ու Հակոբ Ղրիմեցին[2] (XIV–XV դդ.), միմյանց կրկնելով, սահմանում են ամուսնական չափահասության նույն չեմը՝ տղաների համար՝ 15, աղջիկների համար՝ 14 տարեկան: Սակայն նրանք էլ լավ հասկանում էին, որ իրենց մատնանշած տարիքային չեմը չէր համապատասխանում առկա պայմաններին: Եկեղեցին ստիպված էր հաշվի նստել տեղի ունեցող փոփոխությունների հետ: Այդ իսկ պատճառով Ներսես Շնորհալին դեռևս XII դարի երկրորդ կեսին տղաների չափահասության չեմը թողնելով նույնը, աղջիկներինն իջեցնում է մինչև 12 տարեկանը[3]:

Ամուսնության չեմի հետազոտության անփոխարինելի աղբյուր է Հ. Ղրիմեցու «Վասն պսակի ամուսնացելոց» փոքրածավալ գրվածքը[4]: Նա Մեծոփի դպրոցում եղած ժամանակ Թովմա Մեծոփեցու պատվերով անդրադարձել է ամուսնա-ընտանեկան խնդիրներին՝ հեղինակելով սույն հարցի ուսումնասիրության համար կարևոր մի սկզբնաղբյուր:

Հ. Ղրիմեցու վերոհիշյալ գործում նշվում է, որ իրենք տղաների ամուսնության չեմը 15-ից դարձրել են 12, իսկ աղջիկներինը՝ 14-ից 10 տարեկան: Որպես այս կանոնական օրենքի փոփոխության պատճառ՝ նա մատնանշում է երեխաների ծնողների դժդոհությունը («վասն ծնաւղաց աղաղակին»)[5]: Իսկ ի՞նչն էր ծնողների դանգատի պատճառը, ինչու՞ էին նրանք ցանկանում իրենց երեխաներին ամուսնացնել ավելի վաղ տարիքում:

---

[1] Տե՛ս Բաղդասարյան Է. Մ., Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը, Երևան, 1997, էջ 154:

[2] Տե՛ս Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. Հմր 954, էջ 208ա:

[3] Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, աշխատասիրությամբ Է. Մ. Բաղդասարյանի, Երևան, 1995, էջ 134:

[4] Տե՛ս Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. Հմր 954, էջ 208ա–210ա:

[5] Նույն տեղում, էջ 209ա:

Երեխաներին վաղ տարիքում ամուսնացնելու շահագրգռվածությունը, ըստ երևույթին, պետք է բացատրել իրենց դուստրերի անվտանգությունն ապահովելու ծնողների մտահոգությամբ: Աղջկա հասունացմանը զուգահեռ մեծանում էր մահմեդականների կողմից նրան առևանգելու հավանականությունը: Մանր ժամանակագրություններից մեկում ասվում է, որ քրդերը փախցրել էին Աղթամարի կաթողիկոս Զաքարիա Ա Սեֆեդինյանի քրոջը[1]*: Հաջորդող դարերում շատ են դեպքերը, որ քրդերը փորձում են փախցնել հայ աղջիկներին ու իրենց կին դարձնել: Այդ իսկ պատճառով հայ ծնողները նպատակահարմար էին գտնում իրենց դուստերին ամուսնացնել վաղ տարիքում: Հնարավոր է՝ մահմեդականների ձեռքից ազատելու այս մտայնությունը պատճառ դարձավ կամ ամրապնդեց մեկ այլ սովորություն, որպիսին օրորոցախազն (բեշիկ քերթմե, բաշիքարթմա) է:*

Վաղ ամուսնությունը որոշ չափով պայմանավորված էր նաև հարսնացու գտնելու դժվարությամբ, որի խոսուն վկայությունը հենց Հ. Ղրիմեցու «Յաղագս ազգականութեան» աշխատությունն է: Նա փորձել է կարգավորել և ցույց տալ, թե որն է ազգականության սահմանը, քանի աստիճան (պորտ) հեռավորության վրա է սպառվում արյունն ու թույլ տրվում ամուսնությունը: Հ. Ղրիմեցին հայ իրականության մեջ առաջին անգամ ամենայն մանրամասնությամբ քննել է այս հարցը՝ ցույց տալով ազգականների հետ ամուսնանալու շեմը: Ըստ նրա՝ երկու հարազատ եղբայրների թոռների թոռները՝ «թոռնիայ», կարող են խնամիներ դառնալ, այսինքն՝ թոռների թոռների երեխաները՝ «ձագ թոռնիայ», կարող են ամուսնանալ, քանի որ նրանք այլևս արյունակիցներ չեն:

---

[1] Տե՛ս Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 5, կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1971, էջ 97:

խնամիությունը, կնքավորությունն ու որդեգրությունը ևս սահմանափակում էին հարսնացու գտնելու հնարավորությունը, որն առավել դժվար խնդիր էր դառնում հատկապես գյուղական բնակավայրերում, ուր գրեթե բոլորը ազգականներ էին: Նույնիսկ XIX դ. Վասպուրականի գյուղերի մի մասի բնակչությունը չէր գերազանցում մի քանի հարյուրը: Դիպուկ է Սասունի գյուղերի օրինակը: Վ. Պետոյանը գրում է, որ Սասունի գյուղերը հիմնականում բաղկացած էին մոտ ու հեռու ազգակիցներից[1]: Ուստի անհրաժեշտություն պետք է առաջանար հարս բերել հարևան գյուղերից: Այս պարագան ևս արմատավորում էր աղջիկներին վաղ տարիքում ամուսնացնելու պրակտիկան: Իրենց հերթին ծնողները նախանձախնդիր էին տղաների շուտ ամուսնությամբ, որպեսզի տանն իրենց օգնող ձեռք լիներ:

Թեև Հ. Ղրիմեցին, հավատարիմ հայ եկեղեցու կանոնական օրենքներին, սահմանում էր, որ քահանաները չեն կարող պսակ դնել առանց աղջկա և տղայի փոխհամաձայնության, սակայն ամուսնության տարիքային նման չեմի սահմանումը, կարծես, ի չիք էր դարձնում այդ դրույթը:

Դատելով Հ. Ղրիմեցու «Վասն պսակի ամուսնացելոց» երկից՝ վաղ տարիքում ամուսնությունները համատարած բնույթ են կրել: «Վասն Պսակի Ամուսնացելոց»-ում տղաների չափահասության սահմանվող չեմը՝ 12 տարեկանը, չպետք է մեծ տատանումներ արձանագրեր Հայաստանի այս կամ այն բնակավայրերում:

Վաղ ամուսնության պարագայում տղան հաղիվ թե առանձնանար հայրական ընտանիքից, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ գոնե սկզբնական շրջանում, ամուսնությունից հետո տղաները չեն բաժանվել հայրական տնից և ապրել են ծնողների հետ, մի հարկի տակ:

---

[1] Պետոյան Վ., նշվ. աշխ., էջ 312:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՑԱՆԿԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

Ընտանիքի միջին մեծության գործակիցը պարզելու համար նախ և առաջ անհրաժեշտ է իմանալ, թե միջինը քանի տղա և քանի աղջիկ էր ծնվում ընտանիքում: Ըստ այդմ՝ կազմել ենք երկու ցանկ՝ Ա և Բ: Ցանկերի յուրաքանչյուր տողում նշված է գրչության թվականը, ժամանակը, գրչի կամ պատվիրատուի անունը: Կազմած ցանկերում տեղանվան դիմաց նշել ենք տվյալ ձեռագրի գրչության վայրը: Մեր ձեռքի տակ ունենք նաև այնպիսի հիշատակարաններ, որոնցում հստակ վայր չի նշվում, սակայն, Աղթամարի կաթողիկոսի ու Հարավային Հայաստանում հաստատված քուրդ ցեղապետերի մասին հիշատակությունները երկմտանք չեն թողնում, որ հենց Վասպուրականն է ձեռագրի ընդօրինակման վայրը:

Հիշատակարանների բանաձևումներում, որպես կանոն, ընդունված էր նաև նշել ժամանակը, հոգևոր իշխանության ներկայացուցիչներին՝ Ամենայն Հայոց և Աղթամարի կաթողիկոսներին, մերձակա վանքի վանահորը, ինչպես նաև օտար տիրակալներին: Չնայած դրան՝ մի քանի ձեռագրեր անթվակիր են: Լ. Խաչիկյանը որոշ դեպքերում մատնացույց է արել դրանց մոտավոր թվականը՝ հաշվի առնելով տվյալ գրչի ապրած ժամանակաշրջանը կամ աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների ներկայացուցիչներից մեկի հիշատակումը, ինչն էլ արձանագրել ենք կազմած ցանկերում:

Ա ցանկի C վանդակում նշված են երեխաների հայրերը: Ա ցանկի չորս հաջորդական՝ D, E, F, G սյուներում առանձին-առանձին նշել ենք ողջ և մահացած տղաներին ու աղջիկներին: Բ ցանկի D, E, F, G սյուներում ներկայացված են

կենդանի և մահացած եղբայրներն ու քույրերը: Բ ցանկի Գ վանդակում նշված են գրիչների ու պատվիրատուների եղբայրները, որոնք նույնպես ներառվել են հաշվարկի մեջ:

Ընտանիքների առանձնացման գործում հանդիպել ենք մի շարք դժվարությունների. ձեռագրերի մի մասում բառի թե՛ բուն, թե՛ փոխաբերական իմաստով չի հասկացվում՝ ով ում բարեկամն է: Երբեմն հիշատակարանը ստուգել ենք հայերեն ձեռագրերի՝ Վենետիկի, Վիեննայի ձեռագրացուցակների կամ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի՝ համապատասխան հիշատակարանը պարունակող ձեռագրերի միջոցով՝ ճշգրտելու այս կամ այն խնդիրը: Այդպես ենք վարվել հատկապես այն պարագայում, երբ գրիչն ազգականներին թվարկում է թե՛ հիշատակարանի սկզբում, թե՛ վերջում, իսկ Լ. Խաչիկյանը նյութը չծանրաբեռնելու և կրկնաբանությունից խուսափելու նպատակով հատորից դուրս է թողել վերոնշյալ հատվածներից մեկը, թեպետ կան որոշ մանրամասներ, որոնք օգնում են ազգակցական կապը ճշգրտելուն: Առավել ճշգրիտ արդյունքներ ստանալու նկատառումով ցանկերում չենք ներառել այն հիշատակարանները, որոնցում նշված անձանց ազգակցական կապը պարզել գրեթե անհնարին է:

Չենք ներառել նաև այնպիսիք, որոնցում գրիչները դիպվածի բերումով հիշատակում են որևէ քահանայի ու նրա հորը: Ընդունել, որ քահանան եղբայրներ չի ունեցել և այդպես արտացոլել ցանկում, ճիշտ չէր լինի. հիշատակագիրը նպատակ չի ունեցել մեզ փոխանցել նրա ընտանիքի ամբողջ կազմը, հիշել է նրա անձը սոսկ դիպվածի բերումով, իսկ հոր անունը հիշել է նրա անձը որոշակիացնելու համար:

Երբեմն նույն հիշատակագրի ընտանիքի անդամների թիվը փոփոխվում է՝ լույս աշխարհ են գալիս կամ կյանքին հրաժեշտ տալիս նոր երեխաներ: Նման դեպքերում հավաքել ենք միևնույն ընտանիքի մասին եղած բոլոր հիշատակարանները, ար-

ձանագրել ծննդյան կամ մահվան դեպքն ու նոր միայն ներառել ցանկում:

Կա նաև մեկ այլ խնդիր: Այսպես՝ գրիչ Զաքարիան թվարկում է Աստվածատուրի ընտանիքը և ասում՝ «զաւակաց իւրոյ՝ Յովանիսին և այլոցն»: Քանի որ զավակը կարող է լինել և՛ տղա, և՛ աղջիկ, ցանկում ներառել ենք միայն Հովհաննեսին:

Սակայն, երբ հիշատակագիրը, տալով մի որդու անունը, խնդրում է հիշել նաև իր մյուս տղաներին, որոնց անունները չի հաղորդում, այդ դեպքում ցանկում տղաների թիվը հաշվել ենք 3, թեպետ հնարավոր է՝ նա երեքից ավելի տղա է ունեցել:

Թեպետ վերոբերյալ խնդրահարույց դեպքերը շատ չեն և ցանկերի մեծ մասում ունենք հստակ տվյալներ, սակայն հիշատակարանների հարուցած դժվարությունները մեզ հեռու են պահում այն մտքից, թե վրիպակ չկա, ու ցանկերն ամբողջովին սխալագրած են[1]:

ՍՏԱՑՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ՏՂԱՆԵՐ	ԱՂՋԻԿՆԵՐ
Կենդանի տղաների ընդհանուր թիվը՝ 557: Կենդանի տղաների միջին թիվն ընտանիքում՝ 1,85: Մահացած տղաների ընդհանուր թիվը՝ 122: Մահացած տղաների միջին թիվը՝ 0,4: Ծնված տղաների ընդհանուր թիվը՝ 679: Ծնված տղաների միջին թիվն	Կենդանի աղջիկների ընդհանուր թիվը՝ 235: Կենդանի աղջիկների միջին թիվն ընտանիքում՝ 0,8: Կենդանի աղջիկների մասին վկայված ընտանիքներում աղջիկների միջին թիվը՝ 2: Մահացած աղջիկների ընդհանուր թիվը՝ 19: Մահացած աղջիկների միջին թիվն

[1] Ցանկերը տե՛ս 50-65 էջերում:

ընտանիքում՝ 2,25: Տղաների մահացության տոկոսը՝ 18%:	ընտանիքում՝ 0,06: Ծնված աղջիկների ընդհանուր թիվը՝ 254: Ծնված աղջիկների միջին թիվն ընտանիքում՝ 0,85: Աղջիկների մահացության տոկոսը՝ 7,5%:
ՏՂԱՆԵՐ ԵՎ ԱՂՋԻԿՆԵՐ	
Ծնված աղջիկների ու տղաների ընդհանուր թիվը՝ 933: Մահացած աղջիկների ու տղաների ընդհանուր թիվը՝ 141: Մահացած աղջիկների ու տղաների մահացության տոկոսը՝ 15%: Մահացած երեխաների միջին թիվն ընտանիքում՝ 0. 46: Ծնված երեխաների միջին թիվն ընտանիքում՝ 3: Կենդանի մնացած երեխաների միջին թիվն ընտանիքում՝ 2.5:	
ԵՂԲԱՅՐՆԵՐ	ՔՈՒՅՐԵՐ
Կենդանի եղբայրների ընդհանուր թիվը՝ 736: Կենդանի եղբայրների միջին թիվն ընտանիքում՝ 2.5: Մահացած եղբայրների ընդհանուր թիվը՝ 99: Մահացած եղբայրների միջին թիվը՝ 0,3: Ծնված եղբայրների ընդհանուր թիվը՝ 835: Ծնված եղբայրների միջին թիվն ընտանիքում՝ 2,9: Եղբայրների մահացության տոկոսը՝ 11.8%:	Կենդանի քույրերի ընդհանուր թիվը՝ 223: Կենդանի քույրերի միջին թիվն ընտանիքում՝ 0,76: Մահացած քույրերի ընդհանուր թիվը՝ 10: Մահացած քույրերի միջին թիվը՝ 0,03: Ծնված քույրերի ընդհանուր թիվը՝ 233: Ծնված քույրերի միջին թիվն ընտանիքում՝ 0.8: Քույրերի մահացության տոկոսը՝ 4.3%:
ՔՈՒՅՐԵՐ ԵՎ ԵՂԲԱՅՐՆԵՐ	
Ծնված կենդանի քույրերի ու եղբայրների ընդհանուր թիվը՝ 1068:	

Մահացած քույրերի ու եղբայրների ընդհանուր թիվը՝ 109:
Մահացած քույրերի ու եղբայրների մահացության տոկոսը՝ 10.2 %:
Մահացած քույրերի ու եղբայրների միջին թիվն ընտանիքում՝ 0. 4:
Ծնված քույրերի ու եղբայրների միջին թիվն ընտանիքում՝ 3.7:
Կենդանի քույրերի ու եղբայրների միջին թիվն ընտանիքում՝ 3.3:
ՏՂԱՆԵՐ ԵՎ ԵՂԲԱՅՐՆԵՐ
Կենդանի տղաների ու եղբայրների ընդհանուր թիվը՝ 1293:
Կենդանի տղաների ու եղբայրների միջին թիվն ընտանիքում՝ 2.2:
Մահացած տղաների ու եղբայրների ընդհանուր թիվը՝ 221:
Ծնված տղաների ու եղբայրների ընդհանուր թիվը՝ 1514:
Ծնված տղաների ու եղբայրների միջին թիվն ընտանիքում՝ 2.6:
Մահացած տղաների ու եղբայրների միջին թիվն ընտանիքում 0.4:
Տղաների ու եղբայրների մահացության տոկոսը՝ 14.6%:

ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ XV Դ. ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ

Ա) Համաճարակ, սով, հիվանդություններ

XV դ. բովանդակ Հայաստանն ու հատկապես նրա հարավային շրջանները չդադարող պատերազմների բովում էին: Լենկ Թեմուրի արշավանքներն աղետալի հետևանքներ էին ունենում, սպանվում էին հազարավոր մարդիկ: Ամբողջ XV դ. ընթացքում կարա կոյունլու ու ակ կոյունլու թուրքմենական ցեղերն երկարատև պաքար էին մղում ինչպես միմյանց, այնպես էլ Վանի, Բաղեշի և Հայաստանի մյուս տարածքներում հաստատված քրդական իշխանությունների դեմ: Պատերազմներն ուղեկցվում էին սպանություններով ու գերեվարությամբ, ժողովրդագրական տեղաշարժերի պատճառ դառնում՝ հայ բնակչությանը ստիպելով պարբերաբար դեգերել ու հաստատվել համեմատաբար անվտանգ վայրերում: Իրենց հերթին քուրդ իշխանավորներն ավարառության նպատակով առպատակում էին հայկական գավառները:

Երեխաների մահացության մասին հիշատակարաններում տեղ գտած վկայությունները փաստում են, որ մահվան պատճառ էին դառնում ոչ այնքան պատերազմները, որքան դրանց հաջորդած համաճարակները, սովը, ինչպես նաև տարատեսակ հիվանդությունները: Հավանաբար Լենկ Թեմուրի արշավանքին հաջորդած համաճարակի մասին է վկայում Վասպուրականում 1404 թ. գրված հետևյալ հիշատակարանը. «Մահ սաստիկ էր ի վերայ երկրի, որ կոտորէր զամենայն առ հասարակ և զաղիս ծնողացն գալարեցուցանէր, և զաւակացն՝ ի վերայ հարցն և մարցն խարշէր առաւել»[1]: 1413 թ. Խիզանում ընդհ-

[1] ԺԵ դար, Մասն առաջին, էջ 45:

*ընդունված ձեռագրերից մեկը հաղորդում է, որ բռնկված համաճարակին զոհ են գնում հատկապես մանուկները. «Մահտարաժամ է անկեալ վասն մեղաց մերոց յաստուածասաստ բարկութենէն, և կոճոպէ և յափշտակէ զմատաղ մանկունս ի գրկաց ծնողացն և մորմոքեցուցանէ զծնողս և զեղբարս»[1]: XV դ. առաջին տարիներին տարածված մահտարաժամից ժողովուրդը դեռ ուշքի չէր եկել, երբ 1420-ականներին Վանա լճի շրջակայքում նոր մահտարաժամ է բռնկվում, որ դարձյալ չի խնայում երեխաներին. «Եւ ի սոյն ամի եկն սաստիկ մահ տարաժամ ի յաշխարհս մեր և մնաց Բ. (2) տարի ի բոլոր ծովուս, և բազում տունք աւերեցան և ծնաւղք անզաւակ մնացին»[2]: Զանազան համաճարակները շարունակվում են նաև հետագա տարիներին: Ոստանում 1470 թ. ընդօրինակված ձեռագրում Հովհաննես Մանգասարենցը պատմում է, որ 2 տարի է, ինչ մահտարաժամ է: Սրան կրկին զոհ են գնում երեխաներ. ինչպես պատկերավոր ասում է գրիչը՝ «մահտարաժամ է անմեղ տղայոցս»[3]: Մահացության պատճառ էր դառնում նաև սովը, ինչի մասին կան բազում վկայություններ:

Բացի համաճարակից՝ միջնադարում ամենաչնչին հիվանդությունն անգամ մահացու էր դառնում մանուկների համար: Հիշատակարաններում բազմաթիվ են վկայությունները, որտեղ գրիչները կամ պատվիրատուները պատմում են իրենց ուստերի ու դուստրերի վախճանի մասին: Այսպես, Թումայի որդին, որ գրկի երեխա է՝ ծոցասնունդ, մահանում է: Հիշատակարանների լեզվին բնորոշ է մահացության նման դեպքերը կոչել տարաժամ՝ «երիտասարդական կամ տղա հասակաւ»:

Բերենք մի քանի օրինակ՝ ցույց տալու համար, թե ինչ ծավալների էին հասնում վաղաժամ մահվան դեպքերը: 1450 թ.

---

[1] Նույն տեղում, էջ 152:

[2] Նույն տեղում, էջ 375:

[3] ԺԵ դար, Մասն երկրորդ, էջ 300:

Հովհաննեսը սգում է իր երկու տղաների մահը. «Զի սիրաս խոցեալ է ի սատանայէ, և զի կենդանոյն մեռեալ եմ, և աչքս ի բազում արտասուաց կուրացեալ է, զի իմ սիրական որդիքն Սահակն և Մեսրոպն զիս սևեցին»[1]: Թումա գրիչն էլ խիստ ծանր է տանում որդու մահը. «զՈրդին իմ զԽաչատուր պատանին, որ փոխեցաւ առ Քրիստոս և եթող ինձ սուգ անմխիթար մինչև ի մահ, վէրք անողջանալի և խոց անբժշկելի»[2]: 1452 թ. գրված հիշատակարանը գուժում է, որ Սուլթան Մելեքի չորս տղաներն էլ մահացել են[3]: Խոնձա անունով կնոջ տղան 1460 թ. մահանում է անբուժելի ախտից. «Կսկիծն ի սիրաս է հասեր և զիմ աչերս է լալոտ պահէր, գիշեր ու ցերեկ լացեր, և արև ի յիմ սիրաս չէ դիպեր»[4]: Առավել ծանր է Ցխրոյի հոգեվիճակը. նրա 8 երեխաները մահացել են. «Զհինգ որդին փեսայացու սնուց և զերէք դստերքն հարսնացու, և ի յորդոցն և ի դստերացն զիրկեցաւ, և անմխիթար մնաց, և ամենեքեան տարաժամ մահուամբ և տղա հասակաւ փոխեցաւ առ Քրիստոս»[5]:

Երեխաների մահացությունն այնքան տարածված էր, որ հիշատակագիրներն Աստծուց խնդրում են իրենց մանուկներին երկարակեցություն պարգևել. «Աստուած զինքն ընդ երկայն աւուրս առնէ, իւր հաւր և մաւրն ժառանգ պահէ»[6], դեռաբոյս զավակներին «պահեսցէ մինչև ի խորին ծերութիւնն»[7]:

Չնայած մահվան նման տարածվածությանն ու ավերին՝ միջնադարյան ձեռագրերում հայ քրիստոնյայի մահվան դեպքում չեն գործածվում մեռնել, մահանալ բայերը: Հիշատակարանների լեզվին բնորոշ այս միտումը պայմանավորված է

---

[1] ԺԵ դար, Մասն առաջին, էջ 648:

[2] ԺԵ դար, Մասն երկրորդ, էջ 407:

[3] Նույն տեղում, էջ 20:

[4] Նույն տեղում, էջ 144:

[5] ԺԵ դար, Մասն երրորդ, էջ 346:

[6] ԺԵ դար, Մասն առաջին, էջ 243:

[7] ԺԵ դար, Մասն երկրորդ, էջ 58:

քրիստոնեական աշխարհընկալմամբ՝ հանդերձյալ կյանքի մասին քրիստոնեական պատկերացմամբ: Ուստի մահվան գաղափարն արտահայտելու համար մահանալ բայի փոխարեն հայ մարդիկ գործածում էին փոխվել-վերափոխվել, հանգել կամ գնալ առ Աստուած, ի Քրիստոս ձևակերպումները[1]: Մահվան մասին տարածված այս մտայնությունն օգնում է ավելի լավ հասկանալու ժամանակի հայ մարդուն: Ընդ որում, ինքնանույնացման հարացույցի դերում Հայոց ազգ եզրի փոխարեն շատ հաճախ օգտագործվում է «ազգն քրիստոնէից» արտահայտությունը: Երբ որևէ հայ մարդ վատ արարք է գործում, ուրեմն նա սուտ քրիստոնյա է: Օրինակ՝ Զաքարի ընկերը, որի անունը սկզբնաղբյուրը միտումնավոր չի հաղորդում, սուտ քրիստոնյա է. նա խաբել է Զաքարին, կանչել իր տուն գինի խմելու և սպանել նրան[2]:

Բ) Նահատակություն-մարտիրոսություն

Եթե տարատեսակ հիվանդություններով պայմանավորված միջնադարյան Ֆրանսիայում կրկին մեծ էր մահացության ցուցանիշը[3], ապա հայկական գյուղերի պարագայում դրան ավե-

---

[1] Սակավ դեպքերում կիրառվում է նաև ննջել բայը. օր. «Ամենայն ազգականաց, որք կենդանի, որք ննջեցին» (տե՛ս ԺԵ դար, Մասն առաջին. էջ 162): Ոչ հաճախ հանդիպում է նաև հանգել բայը. «Հանգեաւ խաղաղութեամբ ի Քրիստոս» (տե՛ս ԺԴ դար, էջ 77): Գործածվում էր նաև հանգուցյալ բառը. «զՀանգուցեալ(ք)ն ի Քրիստոս», «Տարաժամ հանգուցելոյն առ Աստուած» (տե՛ս ԺԵ դար, Մասն առաջին, էջ 218, 219): Մահվան գաղափարն արտահայտվում էր նաև ավանդել բայի միջոցով, օր. «Աստուծոյ ավանդեցին» (տե՛ս ԺԴ դար, էջ 197):

[2] ԺԵ դար, Մասն երկրորդ, էջ 79:

[3] Ֆրանսիայի Վալ-դը-Մարն դեպարտամենտում գտնվող Դ'Իվղի-Պաղմանտիե 2 միջնադարյան դամբարանադաշտում կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ հուղարկավորվածների երեք քառորդը մահացել է չհասնելով 18 տարեկան: Ընդ որում, մանկական ու երիտասարդական մահացության վերոնշյալ ցուցանիշը նույն է թե՛ վաղ միջնադարում, (VI–XI դդ.), թե՛ ուշ միջնադարում (XII–XIV): Նույնն են նաև մահացության պատճառները՝ հիգիենայի պայմաններ, թերսնում և այլն (տե՛ս Djilalli Hadjouis, նշվ. աշխ., pp. 15–26):

լանում էին նաև տաճիկների (մահմեդական) ձեռքով հայ երեխաների, պատանիների և տարբեր տարիքի մարդկանց սպանությունները: Թեպետ դրանք անհամեմատելի են համաճարակներից ու տարատեսակ հիվանդություններից մահացությունների հետ, այնուհանդերձ, հիշատակարաններում դրանց մասին կան շատ վկայություններ: Մեզ հետաքրքրող դավառներում հայերի կողքին բնակվում էին քրդերը, որոնց էլ պետք է նկատի ունենալ տաճիկ հավաքական անվան տակ:

Նահատակներ էին կոչվում հավատի համար կյանքը զոհաբերած, ոչ քրիստոնյաների ձեռքով սպանված անձինք, ուստի հիշատակարանի գրիչներն ու ստացողները պարտաճանաչ նշում են այդ դեպքերը, երբ իրենց ազգականին «անհավատները» սպանել են: Մարթայի տղան ու աղջիկը տարաժամ մահացել են, իսկ ահա մյուս որդին նահատակվել է «ի ձեռաց անաւրինաց»[1]: Հայրապետին տաճիկները քարով են սպանել[2]: Ոստանում Ստեփանոսի որդի Լուսավադը նույնպես մահացել է մահմեդականների ձեռքով՝ «նահատակեցաւ յանաւրինաց վասըն անուանըն Քրիստոսի»[3]: Պողոսի հորն անօրենները սպանել են, եղբայրներից մեկին սրախողխող արել, Գրիգորի աղջիկ Գոհարին նույն «անօրենները» քարավեժ են արել[4]:

XV դ. հայերեն ձեռագրերի հիշատակարանները հայի և մահմեդականի ամուսնության ընդամենը մեկ դեպք են մեզ հաղորդում: Լենկ Թեմուրի արշավանքերի ժամանակ այրված վանեցի մի կին՝ Հիմար անունով, ամուսնանում է քրդի հետ: Սակայն քուրդ ամուսնու ազգականները պահանջում են հայ կնոջից հավատափոխ լինել և իսլամ ընդունել: Հիմարը հրաժարվում է՝ ասելով. «Ես ի նա հաւան եմ, նա զիւր հաւատն

[1] ԺԵ դար, Մասն երկրորդ, էջ 6:

[2] ԺԵ դար, Մասն երրորդ, էջ 445:

[3] ԺԵ դար, Մասն առաջին, էջ 585:

[4] ԺԵ դար, Մասն երրորդ, էջ 4:

պաշտէ, և ես՝ զիմ»[1]: Նա շարունակում է եկեղեցի գնալ, ինչը շարժում է մահմեդական հոգևորականների զայրույթը. նրանք 1416 թ. փետրվարի 15-ին քարկոծելով սպանում են հիմարին[2]:

Այնուամենայնիվ, պետք չէ նահատակության մասին յուրաքանչյուր վկայություն դիտարկել միայն կրոնական՝ քրիստոնյա-մուսուլման հակադրության համատեքստում: Միշտ չէ, որ հակադրության առանցքում կրոնական տարբերությունն է եղել: Կենցաղային վեճը քրիստոնյայի ու տաճիկի միջև կարող էր մահվան հանգեցնել. դա նույնպես դիտվում էր որպես նահատակություն:

[1] Նստարք Հայոց, հաւաքեալ եւ ի լոյս ածեալ ձեռամբ Ղևոնդ վարդապետի Փիրղալէմեան Տոսբեցւոյ, Կ. Պոլիս, 1888, էջ 47–48:

[2] Նույն տեղում:

ՏՂԱՆԵՐԻ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ՆՐԱՆՑ ՄԻՋԻՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ

Մահացության պատճառները քննարկելուց հետո ստացված տվյալների հիման վրա փորձենք հաշվել տղաների մահացության ցուցանիշը: Չնայած նահատակության մասին վկայություններին՝ տղաների մեծագույն մասը մահացել է հիվանդություններից ու համաճարակներից:

Մեր ունեցած տվյալներով հնարավոր չէ պարզել մանկական մահացության (0–4 տարեկան) ցուցանիշը: Ընդ որում, գրեթե առանց վերապահումների կարող ենք պնդել, որ հիշատակարանները չեն խոսում մեռելածնության մասին, ինչը չափազանց տարածված էր միջնադարում: Նման եզրակացության հանգելու գլխավոր պատճառն այն է, որ գրեթե բոլոր դեպքերում, երբ խոսվում է երեխաների մահվան մասին, հիշատակագիրներն ավանդում են նրանց անունները: Հասկանալի է, որ մեռելածին երեխային չէին հասցնի անվանակոչել:

Հիշատակարանները վկայում են թե՛ ծոցասնունդ երեխաների, թե՛ պատանիների, թե՛ ավելի մեծ՝ սարկավագ դարձած տղաների մահվան մասին: Սսի 1243 թ. Կանոնական ժողովի Դ (4) կանոնի համաձայն՝ սարկավագ չէին կարող դառնալ 20-ը չբոլորած տղաները[1]: Հիմք ընդունելով սարկավագական կարգի հասած տղաների մահվան մասին առկա վկայությունները՝ 15–20 տարեկանն ենք սահմանում մահացության տարիքի վերին չեմ: Այնուամենայնիվ, դատելով հիշատակարանների վկայություններից՝ թե՛ համաճարակներից, թե՛ տարատեսակ հիվան-

[1] Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 304:

դությունների մահանում էին հիմնականում ավելի փոքր տարիքի երեխաները:

Այսպիսով՝ Ա ցանկում ներառված 302 ընտանիքների կտրվածքով տղաների ընդհանուր թիվը 679-ն է, որից 557-ը՝ կենդանի, իսկ 122-ը՝ մահացած: Ըստ այդմ՝ կարող ենք ամրագրել, որ տղաների 18%-ը մահանում էր 20 տարեկանը չբոլորած:

Հաշվի առնելով մեռելածնության մասին վկայությունների բացակայությունը՝ կարելի է արձանագրել, որ մահացության տոկոսն ավելի բարձր է եղել, այսինքն՝ ավելի շատ են ծնվել և ավելի շատ մահացել:

Ա ցուցակում ողջ մնացած տղաների միջին թիվը 1.85 է, իսկ մահացածներինը՝ 0.4, այսինքն՝ տղաների միջին թիվը 2.25 է: Կարծում ենք՝ այս ցուցանիշը չի արտացոլում իրականությունը, քանզի տղաների թվաքանակն արձանագրված է ըստ հիշատակարանի գրչության տարեթվի, մինչդեռ դրան հաջորդող տարիներին նույն ընտանիքում կարող էին նոր երեխաներ ծնվել: Այսինքն՝ այս ցուցանիշն ունի աճի միտում: Այսպես՝ Հովհաննեսն ունեցել է երկու տղա, մենք նրա մասին այլևս հիշատակություն չունենք և չենք կարող բացառել, որ նա կրկին հայր է դառնալու, ինչպես Գրիգորը, որի միակ տղան կրծքի երեխա է, ուստի շատ հավանական է, որ Գրիգորը նույնպես զավակ է ունենալու: Այս հարցը լուծելու համար մեզ օգնության է գալիս եղբայրների թիվը՝ Բ ցուցակը: Ի տարբերություն զավակների՝ եղբայրների թիվը մշտապես հաստատուն է, կայուն: Բ ցանկում՝ եղբայրների բաժնում, ունենք հետևյալ թվերը. 835 եղբայր, որոնցից 736 ողջ են, իսկ մնացածը տարբեր տարիքում՝ թե՛ համաճարակներից ու հիվանդություններից, թե՛ նահատակությունից ու առաջացած տարիքի հետևանքով հրաժեշտ են տվել երկրային կյանքին: Այսպիսով՝ ստանում ենք հետևյալ պատկերը՝ ողջ մնացած եղբայրների միջին թիվը 2.5 է,

մահացածներինը՝ 0.3, իսկ ծնված երեխաների միջին թիվն ընտանիքում՝ 2.9: Եղբայրների մահացության տոկոսը 12 է:

Այսպիսով, եթե Ա ցանկում տղաների հաշվարկում, ընտանիքում միջին հաշվով ծնվել է 2.25 երեխա, ապա եղբայրների պարագայում՝ 2.9: Կարելիություն չափով ճշմարտամերձ պատասխաններ ստանալու համար Վասպուրականի հայ ընտանիքում տղաների միջին թիվը որոշելու համար վերցնում ենք Բ ցուցակում եղբայրների մասին տվյալները, որի համաձայն՝ ընտանիքում ողջ մնացած տղաների միջին թիվը 2.5 է: Մահացության աստիճանն ավելի ճշգրիտ արտացոլված է Ա ցանկում. մահացած տղաների միջին թիվը 0.4 է: Այս պարագայում ճշտվում է տղաների միջին թիվը, այն է՝ 2.9–3:

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ

Աղջիկներին չնչելու հիշատակագիրների կաշկանդվածությունը խիստ դժվարացնում է XV դ. ընտանիքներում նրանց միջին թիվը ճշտելու՝ առանց այդ էլ խրթին գործը: 302 ընտանիքից միայն 127-ում վկայություններ կան աղջիկների թվաքանակի վերաբերյալ, իսկ ընդհանուր առմամբ՝ դարի կտրվածքով հիշվում է 254 աղջիկ: Այդ պարագայում ծնված աղջիկների միջին թիվը ստացվում է 0.85, որ հեռու է իրականությունից: Թվի հստակեցմանը չեն օգնում քույրերի մասին վկայությունները. հիշատակագիրները կրկին հազվադեպ են նշում իրենց քույրերին: Բացի այդ՝ քույրերի մասին եղած տվյալների մի մասը զուտ պատահական է, հաճախ նրանց մասին իմանում ենք շնորհիվ այն բանի, որ քույրն է ձեռագրի պատվիրատուն: Քույրերի միջին թիվն էլ ստացվում է 0.8, որը չի արտահայտում իրական պատկերը:

Դրված խնդիրն ի կատար ածելու համար դիմենք այլ մեթոդի: Աղջիկների թիվը բաժանենք ոչ թե բոլոր ընտանիքների (302), այլ միայն այն ընտանիքների թվի (127) վրա, որ աղջիկները նշված են հիշատակարաններում: Այս դեպքում պատկերն առավել պարզորոշ կդառնա. մեկ ընտանիքում եղել է 2 ողջ դուստր: Հաշվի առնելով այն հանգամանքը, որը նախ աղջիկները մանուկ հասակում տղաներից ավելի քիչ են մահանում ու նրանք նույնպես հիշվում են հընթացս, կարող ենք ողջ մնացած աղջիկների թիվը (տղաների օրինակով, աղջիկների թվաքանակը ևս ունի աճման միտում) սահմանել 2.5: Կարծում ենք՝ այս թիվն ավելի մոտ է իրականությանը, և կարող ենք այն հիմք ընդունել ընտանիքի միջին մեծության գործակցի հնարավորինս ճշգրիտ պատկերն ուրվագծելու ճանապարհին:

Ըստ մեր տվյալների՝ աղջիկների մահացության ցուցանիշը՝ 7.5% է: Սա ևս չի արտահայտում իրականությունը: Կարծում ենք՝ աղջիկների մահացության ցուցանիշը պետք է ավելի բարձր լինի՝ փոքր-ինչ զիջելով տղաների մահվան աստիճանին:

ԸՆՏԱՆԻՔԻ ՄԻՋԻՆ ՄԵԾՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑԸ

Ի մի բերելով առկա տվյալները՝ ստանում ենք հետևյալ պատկերը: Հստակ է՝ ընտանիքներում 2-ից ավելի է կենդանի տղաների թիվը: Հաշվի առնելով, որ մահացության մասին վկայությունները չեն վերաբերում մեռելածնության, հետևաբար տղա երեխաների մի մասը որոշ ժամանակ ապրել է ընտանիքներում ու նոր մահացել, ուրեմն կարող ենք ողջ տղաների թիվը սահմանել 2–3: Նույն տրամաբանությամբ՝ 2–3 կարելի է սահմանել նաև աղջիկների թիվը: Հետևաբար, ըստ մեր տվյալների՝ հայ ընտանիքը բաղկացած է եղել 4–6 երեխայից և ծնողներից, այսինքն՝ 6–8 հոգուց: Ստացված տվյալները հաստատվում են նաև մատենագրական վկայություններով: Թովմա Մեծոփեցին, պատմելով 1438 թ. քուրդ Փիր-Ալիի ավերածությունների մասին, գրում է. «Զի ի սոյն աւուրս պիղծ իշխանն Փիր-Ալի անուն, որ նստէր ի քարն Ամկու, Գ. (3) անգամ ի սոյն ամի զերկիրն Արճիշու եւ Արծկու գերեաց եւ կողոպտեաց, եւ ի գեղն Երիշատ զձեռնաւորն Մկրտիչ անուն՝ Ը (8) մարդով ընտանեոք տան իւրոյ, ի հուրն այրեաց»[1]:

Փոքր ընտանիքի կազմը հաշվելուց հետո փորձենք ուրվագծել նաև մեծ ընտանիքի՝ գերդաստանի պատկերը: Եթե ընդունելու լինենք, որ միևնույն տանն ապրում են երկու եղբայր, ինչն անհավանական չէ, ապա մեծ ընտանիքում պետք է հաշվել 8–12 երեխա և 4 ծնող, այսինքն՝ 12–16 հոգի, իսկ տատի և պապի կենդանության դեպքում՝ 14–18: Երեխաների մահվամբ ու աղջիկների ամուսնությամբ պայմանավորված՝

---

[1] Թովմա Մեծոփեցի, էջ 192:

ընտանիքի անդամների թիվը մերթ նվազել է, մերթ էլ ավելացել՝ տղաների հարս տուն բերելու դեպքում:

Թեպետ Լ. Խաչիկյանը հիշատակարաններից մեկում մատնացույց է անում մեկ հարկի տակ ապրող 66 մարդու անուն, սակայն միաժամանակ դիպուկ նկատում է, որ «XV դ. հայերեն ձեռագրերի յիշատակարաններից շատերի մէջ տուեալներ կան աղգակցական նոյն սկզբունքներով կազմուած բազմանդամ գերդաստանների մասին, որոնք իրենց կազմում հաճախ ունենում էին 19, 17 կամ 16 անդամներ»[1]:

Ինչպես Վասպուրականը, այնպես էլ ամբողջ Հայաստանն անդադար պատերազմների, համաճարակի, սովի ու գերեվարության տարաբախտ կացության մեջ էր նաև հետագա առնվազն մեկուկես հարյուրամյակում: Դարերի անջրպետն էլ շատ բան չէր փոխում. չկային մասնագետ բժիշկներ, չէին նահանջել տարատեսակ, նույնիսկ ներկայում ոչ վտանգավոր համարվող հիվանդություններից մահացությունները, նույնն էին նաև հաղորդակցության ուղիները: Այս պարագայում դժվար թե ծնելիության ու մահացության ցուցանիշները հսկայական տատանումներ արձանագրեին հաջորդող դարի ընթացքում:

Իսկ ահա ավելի ուշ ժամանակաշրջանի համար հետաքրքիր տվյալներ է ստացել Գ. Բադալյանը: Վանի վիլայեթի 158 բնակավայրերի 1561 հայ ընտանիքների մասին ունեցած արխիվային վիճակագրական տվյալների հիման վրա նա ցույց է տվել, որ առաջին աշխարհամարտի նախօրեին Վանի վիլայեթում ապրող հայ ընտանիքի միջին մեծության գործակիցը 8.6 է եղել[2]:

---

[1] Խաչիկյան Լ., Աշխատութիւններ, հ. 2, Երեւան, 1999, էջ 284:

[2] Բադալյան Գ., Վանի վիլայեթ. Բնակչության ազգային կազմը Առաջին աշխարհամարտի նախօրեին, «Իրան-նամէ», 1993, թիվ 1, էջ 8–10:

XIX դ. սկզբի Էրզրումի նահանգի բնակչության թվաքանակը հաշվելիս ընտանիքի միջին մեծության գործակցին անդրադարձել է Ա. Մելքոնյանը: Ուսումնասիրելով խնդրին վերաբերող վավերագրական ու վիճակագրական բազմաթիվ տվյալներ՝ նա համոզմունք է հայտնել, որ գյուղաբնակ հայ ընտանիքի անդամների միջին թիվը պետք է 8 հաշվել: Բացի այդ՝ հիմնվելով XIX դ. մամուլի հրապարակումների վրա ու հաշվի առնելով քրդերի կենցաղավարությունը, նա վստահորեն պնդել է, որ քրդական ընտանիքների միջին մեծության գործակիցը զիջել է հայ ընտանիքի ցուցանիշին[1]: Չի բացառվում, որ դրանում մեծ դեր է խաղացել նաև թուրքերի և քրդերի շրջանում տարածված մերձավոր ազգականների միջև ամուսնությունները, ինչը կարող էր հանգեցնել երեխաների մահացության ավելի բարձր ցուցանիշի:

Ընտանիքի թվաքանակի մասին տեղեկությունները հնարավորություն են ընձեռում ճշտել այս կամ այն բնակավայրի բնակչության մոտավոր թվաքանակը: Ջիովան Մարիա Անջիոլելլոյի վկայությամբ՝ Վանա լճի Աղթամար կղզում XV դ. երկրորդ կեսին բնակվում էին «ավելի քան 600 տուն հայ քրիստոնյա»[2]: Տեղին է նշել, որ սկզբնաղբյուրները խոսում են այն մասին, որ տարատեսակ արշավանքներից ու ասպատակություններից խույս տալու նպատակով հայ մարդիկ հաստատվում էին Աղթամար կղզում, որին անվանում էին անառիկ ու աստվածապահ: 1425 թ. պատկերելով Արծկեի ու Արճեշի ավերումը՝ գրիչը տեղեկացնում է, որ միայն Աղթամարի Սուրբ Խաչն է զերծ մնացել ավերածությունից. «Միայն խոյակապ սուրբ Խաչս է մնացեալ իբր զհզաւր թագաւոր՝ անսասան և

[1] Մելքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 110–112:

[2] Աղբյուրներ Հայաստանի յեվ Անդրկովկասի պատմության, Հակոբյան Հ., Ուղեգրություններ, հ. I, Յերեվան, 1932, էջ 271:

անպարտելի, որ և աջ անեղին աստուծոյ հրեղէն պարիսպ եղիցի սմա՝ պահելով առանց փորձանաց ի պարծանս ամենայն քրիստոնէից»[1]*: Ուստի պատահական չէ, որ հիշատակագիրներից մեկը Աղթամար կղզին կոչվում է «զանմատչելիս և զանկոխս ոտից թշնամեաց և զտեղիս ապաստանի բոլոր աշխարհացս»*[2]*: Հիշատակարանները վկայում են, որ այս տեղաշարժի ընթացքում դրանցվում էին նաև մահվան դեպքեր, ուստի նույնիսկ ընտանիքի անդամների թվաքանակը 4–5-ով հաշվելու դեպքում աներկբայելի է, որ Աղթամարում ապրում էին առնվազն 2400–3000 հայեր: Կարծես տարակույսները փարատելու համար են XVI դ. սկզբում գրված եվրոպացի անանուն վաճառականի հուշերը. «Կա մի փոքրիկ քաղաք երկու մղոն շրջագծով, քաղաքը ունի այնքան տարածություն, որքան կղզին: Այդ քաղաքը կոչվում է Արմենիկ (Arminig), շատ բազմամարդ է և միայն հայ քրիստոնյաներն են բնակվում այնտեղ, առանց ոչ մի մահմեդականի, ունի շատ եկեղեցիներ, բոլորը հայ քրիստոնյաների պաշտամունքի համար»*[3]*:*

Հայերեն ձեռագրերի հազարավոր հիշատակարանները լայնածավալ դաշտ են բացում պատմական ժողովրդագրության նմանատիպ ուսումնասիրությունների համար: Ի տարբերություն XII–XIII դդ. հիշատակարանների՝ XIV–XVIII դդ. թվագրվողներն առատ նյութ են մատակարարում հայկական ընտանիքների վերաբերյալ՝ հետազոտողին հնարավորություն ընձեռելով այլաբնույթ ու այլալեզու աղբյուրների և վիմագրերի ուսումնասիրության, ինչու չէ նաև պեղումների արդյունքների համադրությամբ վեր հանել բնակչության ու ընտանիքի թվաքանակի մասին տեղեկությունները, ճշտել մահացության ու

[1] ԺԵ դար, Մասն առաջին, էջ 326–327:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, էջ 300:

ծնելիության ցուցանիշները: Թե՛ առանձին՝ միայն գավառների, թե՛ ընդգրկուն՝ ամբողջ Հայաստանի կտրվածքով նմանատիպ ուսումնասիրությունները հնարավորություն կտան հասկանալու, թե ո՞ր գավառներում են ընտանիքներն ավելի բազմամարդ եղել, ո՞ր գավառներում էր մահացության ու ծնելիության ցուցանիշն ավելի բարձր, ինչո՞վ են բացատրվում այդ տատանումները, ընտանիքի թիվն ի՞նչ փոփոխության է ենթարկվել տարբեր դարերի ընթացքում՝ դրանով իսկ հարստացնելով Հայաստանի պատմության մասին մեր իմացությունը:

ԸՆՏԱՆԻՔ

ՑԱՆԿ Ա

			Կենդանի	Կենդանի	Մահացած	Մահացած
Թվական	Վայր	Գրիչ/ստացող	Տղա	Աղջիկ	Տղա	Աղջիկ
1401	Խիզան	Աստվածատուր ստ.	1			
1402	Խիզան	Հովհաննես			1	
1402	Խլաթ, Մատնեվանք	Բենիամին	1			
1402	Խլաթ, Մատնեվանք	Կարապետ ստ.	1			
1404	Տշող գյուղ, Ռշտունիք	Ղազար գրիչ	2			
1404	Գանձակ, Ռշտունիք	Անհայտ		3		
1409	Կազթանց գյուղ, Մոկս	Թադեոս ստ.	1		1	
1409	Աղթամար	Հովհաննես ստ.			3	
1409	Աղթամար	Թադեոս	1	1		
1410	Տշող գյուղ, Ռշտունիք	Հովհաննես ստ.	1		2	
1411	Ոստան	Թազ(ա)վոր	4	2		
1410	Մոկք	Հովհաննես	1			
1411	Կասր գյուղ	Ռմնկ	4			
1412	Արճեշ	Մկրտիչ	5			
1412	Ոստան	Ստեփանոս ստ.	2			
1413	Վան	Ղուկաս ստ.	2			
1413	Մոկք	Թադեոս ստ.		2	1	
1413	Մոկք	Մկրտիչ	3			
1414	Վասպուրական	Հովհաննես	1			
1414	Վասպուրական	Հայրապետ ստ.	2	1		
1414	Վասպուրական	Կարապետ	1			
1414	Վասպուրական	Շահ-Մելիք	2	2		
1417	Ջերմաձոր, Մոկք	Մկրտիչ	2			
1417	Ջերմաձոր, Մոկք	Միրուն	4	4		
1418	Բերկրի	Մկրտիչ	2			
1418	Վան	Ղազար ստ.			1	
1418	Վան	Հովհաննես ստ	2	1		
1418	Ռշտունիք	Ստեփանոս ստ.	3		1	
1418	Ռշտունիք	Թավրեզ-Մելիք	3			
1419	Աղթամար	Անհայտ	1			
1420	Նարեկ գյուղ, Ռշտունիք	Թաթարբեկ ստ.	1			
1420	Նարեկ գյուղ, Ռշտունիք	Թումա(Թովմա, Թովմաս)	1		1	
1420	Խիզան	Ծերուն ստ.	2			

1421	Աղթամար	Հովհաննես	2			
1421	Աղթամար	Խութլու-Մելիք	3			
1421	Աղթամար	Հովհաննես ստ.	2			
1421	Աղթամար	Մկրտիչ	1			
1421	Ծպատի վանք. Մոկք	Ստեփանոս	3	1		
1422	Բերկրի	Թումա	2			
1422	Բերկրի	Մարթա	2	2		
1422	Վան	Հովհաննես ստ.	2			
1424	Կամուրջ գյուղ. Խլաթ	Լուսերես	2			
1424	Կամուրջ գյուղ, Խլաթ	Ստեփանոս ստ.	2			
1425	Ծպատի վանք. Մոկք	Հովհաննես ստ.	1	2		
1425	Վասպուրական	Աստվածատուր	3	1		
1425	Մոկք	Հովհաննես ստ.	1	2		
1426	Վատնիշատ գյուղ, Ոստան	Ստեփանոս	1		2	
1430	Խոսրովավանք. Շատախ	Մամատիկին	1	1		
1433	Ուրանց գյուղ, Կարճկան	Ներսես ստ.	2			
1433	Սուրբկանց գյուղ. Մոկք	Լեանոս	3			
1433	Սուրբկանց գյուղ, Մոկք	Կարապետ	2		1	
1434	Գամաղիելի վանք	Եզդինբախշ	2			
1434	Գամաղիելի վանք	Շարաֆ	1			
1434	Գամաղիելի վանք	Խդ(տ)դշան	1	2		
1434	Գամաղիելի վանք	Ֆխրո			5	3
1436	Աղթամար	Հովհաննես ստ.	2		1	
1437	Խլաթ	Աստվածատուր գրիչ	1			
1437	Արճեշ	Թաճդին ստ.	2			
1437	Թաղու գյուղ	Դավիթ ստ.		2	1	
1437	Խիզան	Թումա ստ.	3			
1439	Լիմ	Հովսեփ ստ.			4	
1440	Աղթամար	Հովհաննես ստ.			1	
1440	Մատնեվանք. Խլաթ	Ներսես գրիչ	1			
1440	Ոստան	Պետրոս ստ.		2	2	
1441	Քաջբերունիք	Գուլփաշա ստ.	2		1	
1441	Աղթամար	Դանիել գրիչ	3		2	1
1441	Տշող գյուղ, Ռշտունիք	Կարապետ ստ.	2			

1443	Սուխարավանք. Արճեշ	Պապ	2			
1444	Աղթամար	Թումա ստ.			2	
1444	Վան	Մկրտիչ ստ.	2			
1444	Վան	Խոցաղեղ	1	1		
1444	Աղթամար	Ստեփանոս ստ.	1		1	
1444	Աղթամար	Գրիգոր գրիչ	2	2		
1444	Աղթամար	Քարիմ ստ.	2			
1444	Աղթամար	Առաքել ստ.	3			
1446	Մեծոփավանք. Արճեշ	Թովմա Մեծոփեցի	1			
1447	Աղթամար	Գրիգոր	2			
1447	Գինեկանց գյուղ. Մոկք	Սարգիս ստ.			1	
1447	Ռշտունիք	Շահ-Խութլու ստ.	1	3	1	
1449	Աղթամար	Հովհաննես ստ.	2	1		
1450	Ցիպնավանք. Բզնունիք	Կարապետ ստ.	2		2	
1450	Խլաթ	Ամիրդոլ ստ.	5			
1450	Արճեշ	Վարդան ստ.	1			
1450	Արճեշ	Հովհաննես գրիչ			2	
1451	Վան	Մարթա ստ.			2	1
1451	Վան	Կարապետ	1	1		2
1451	Ռշտունիք	Սուքիաս ստ.	3			
1452	Աղթամար	Սուլթան-Մելեք ստ.	1	1	4	
1460-ական	Աղթամար	ուստա Ատոմ	2	1		1
1460-ական	Աղթամար	Հովհաննես	1	2		
1452	Աղթամար	Մկրտիչ ստ.	5			
1452	Վան	Վարդան գրիչ	3			
1453	Վան	Մելիք-Խաթուն	1			
1453	Վան	Շահփաշա ստ.	3	1		
1454	Բազենից վանք. Խիզան	Ուլու-Խաթուն	3			
1454	Թաջրերունիք	Վարդան ստ.		1	1	
1454	Աղթամար	Ատոմ ստ.	1			
1454	Արճեշ	Խաչատուր ստ.			1	
1455	Արճեշ	Հովհաննես			1	
1455	Արճեշ	Եվաղ(տ)շահ	2			
1455	Արճեշ	Խաչատուր			3	
1455	Աղթամար	Հայրապետ գրիչ	1			
1455	Վասպուրական	Հովհաննես ստ.	3			
1455	Փասավանք, Մոկք	Հովհաննես	3	3		
1455	Փասավանք, Մոկք	Հովհաննես	1	1	1	
1455	Ռշտունիք	Զեալ ստ.	2	2		

1456	Ռշտունիք	Մկրտիչ	3	2		
1456	Շատվան	Ստեփանոս ստ.	1		2	
1456	Փասավանք, Մոկք	Աստվածատուր		2		
1456	Փասավանք, Մոկք	Սալչուկ	2			
1456	Փասավանք, Մոկք	Փաշա	3			
1457	Լիմ	Գոհար-Մեղեք			2	
1457	Ցիպնավանք, Բզնունիք	Հովհաննես ստ.	2	3		
1457	Արճեշ	Մխիթար	2			
1457	Ոստան	Կարապետ ստ.	2	4		
1457	Խիզան	Հովհաննես	1	1		
1458	Խառաբաստ	Մարթա	3	2		1
1458	Ասփսթան գյուղ, Աղբակ	Մուլթան	2	1		
1460-70	Աղթամար	Աբդուլբեկ	2	1		
1458	Սորավանք	Ստեփանոս			1	
1458	Սորավանք,	Թավաքալ			1	
1459	Շատվան	Ջանմելեք ստ.	1	1		
1459	Շատվան	Հովհաննես	4	4		
1459	Շատվան	Վարդ-Մանուկ	2		3	1
1459	Շատվան	Մելիքսեթ գրիչ	2	1		
1459	Շատվան	Աստվածատուր	2	1		
1460	Արծկե	Խդրշահ	2	2		
1460	Արծկե	Աստվածատուր	1			
1460	Արծկե	Կարապետ	2			
1460	Արծկե	Դոնդիշ	2			
1460	Արծկե	Դանիել գրիչ	1			
1460	Արծկե	Միքայել գրիչ	1		1	
1460	Աղթամար	Թումա	3	1		
1460	Աղթամար	Խոնձա ստ.	2	1	1	
1460	Աղթամար	Վարդան ստ.	1			
1460	Աղթամար	Սիմեոն	4			
1460	Վան	Շատիշահ	1	2	1	
1460	Խիզան	Վարդան ստ.	1			
1460	Աղթամար	Խաչատուր ստ.	1		1	
1462	Ունձք գյուղ, Քաջբերունիք	Մսրմելիք ստ.	5			
1462	Վան	Ստեփանոս			4	1
1462	Ունձք գյուղ, Քաջբերունիք	Ալեքսան	2	4		
1462	Արճեշ	Խաչատուր ստ.	1	3		
1462	Աղթամար	Բուռթել			1	
1462	Աղթամար	Ավագ	6	2		
1462	Աղթամար	Հովհաննես	2	1		

1462	Աղթամար	Խաչատուր	7	4		
1462	Աղթամար	Գրիգոր	3			
1462	Աղթամար	Մտեփանոս	3	3		
1462	Աղթամար	Սարգիս	1			
1462	Կտուց	Էվատշահ	1			
1462	Կտուց	Մուրատշահ	2			
1462	Կտուց	Կարապետ	3			
1462	Կտուց	Խաթունշահ	2	4		
1462	Վասպուրական	Թումա ստ.	1			
1462	Վան	Ատոմ ստ.	1			
1462	Վան	Մելիքսեթ գրիչ	1	3	2	
1463	Կտուց	Խալիֆա ստ.	2	6		
1463	Արծկե	Եղիլշահ ստ.		3	2	
1463	Արծկե	Սուլթանշահ	2	1		
1463	Արծկե	Նորատունկ	3			
1463	Արծկե	Մսրմելիք			1	
1463	Աղթամար	Մարտիրոս ստ.	2	1		
1463	Աղթամար	Հակոբ	4	2		
1463	Ռշտունիք	Աստվածատուր ստ.	3	3	1	
1464	Վասպուրական	Պողոս	1	2	1	
1464	Շատվան	Կարապետ	1	4	1	
1465	Արճեշ	Խալիմ-Խաթուն ստ.	1	1	3	
1465	Վասպուրական	Հովհաննես ստ.	1			
1466	Արծկե	Հովհաննես ստ.	2			
1466	Արծկե	Ատոմ գրիչ	1			
1466	Մատնեվանք, Խլաթ	Հոլիփսիմե	1	1	1	
1466	Մատնեվանք, Խլաթ	Աստվածատուր	3			
1466	Բոնաշեն գյուղ, Մոկք	Մխիթար գրիչ	6		1	
1466	Բոնաշեն գյուղ, Մոկք	Գրիգոր գրիչ	2			
1467	Ոստան	Սուլթանշահ	4	2		
1467	Ոստան	Խումար	2			
1467	Ոստան	Շրվան	3			
1467	Ոստան	Հովհաննես ստ.	3			
1467	Ոստան	Շարմելիք	3			
1468	Խիզան	Սարգիս	2			
1469	Փասավանք, Մոկք	Հովհաննես	1			
1469	Փասավանք, Մոկք	Զաքարե	3			
1469	Գամաղիելի վանք	Առաքել ստ.	3	4		
1469	Գամաղիելի վանք	Սահակ	1	1		
1470	Արճեշ	Հովհ. Մանգասարենց			3	
1470	Աղթամար	Սստղաղ(ա)	2	1		
1470	Աղթամար	Հայրապետ	1	1		

1470	Աղթամար	Գրիգոր	1	1		
1471	Աղթամար	Թումա	2			
1471	Աղթամար	Մարտիրոս	1			
1471	Վասպուրական	Վարդան գրիչ	2		1	
1472	Արճեշ	Գրիգոր ստ.		1	2	
1473	Խիզան	Հովսեփ	1			
1473	Բերկրի	Մարտիրոս ստ.			1	1
1473	Բերկրի	Շահփաշա	2			
1474	Արճեշ	Հովհաննես	4	2		
1475	Խլաթ	Աստվածատուր	1		2	
1475	Խլաթ	Հովհաննես գրիչ	2		1	
1475	Վան	Կարապետ գրիչ	3		1	
1475	Աղթամար	Ներսես գրիչ	1			
1475	Խիզան	Դամուր	5	2		
1475	Արծկե	Ստեփանոս ստ.	5	1		
1475	Արծկե	Մարտիրոս	1			
1475	Արծկե	Շահվելի	1			
1475	Արծկե	Ալեքսան	1			
1475	Աղթամար	Մինա-խաթու ստ.	4	5		
1475	Վան	Կարապետ ստ.		2		
1476	Վան	Սուլթան-մելեք	1	1		
1476	Վան	Խաթուն-մելիք	7			
1476	Վան	Մլխ(ի)ամ	2			
1476	Վան	Հովհաննես	2	2		
1476	Վան	Գրիգոր	2	1		
1476	Վան	Սուլթանբախտ		2		
1476	Վան	Եզդանբաիշ	5		2	
1476	Վան	Կարապետ	1			
1476	Վան	Գրիգոր	2			
1476	Վան	Ստեփանոս	2	2		1
1476	Աղթամար	Սադաղ	1	2		
1476	Աղթամար	Խաթուն-մելեք	3	1		
1477	Փասավանք, Մոկք	Ավետիս	3	1		
1477	Շատվան	Սիրամարգ	2	2		
1477	Շատվան	Ազիզ	1			
1477	Շատվան	Մրջան	1			
1477	Շատվան	Եղիսաբեթ	2			
1478	Աղթամար	Դուրդանես	2	1		
1478	Աղթամար	Շահզադե	2			
1478	Աղթամար	Ամիրմուսե	2	3		
1478	Բոնաշեն գյուղ, Մոկք	Խոսրով ստ.	3	2		
1478	Բոնաշեն գյուղ, Մոկք	Մարտիրոս	5			

1478	Բոնաշեն գյուղ, Մոկք	Սահակ	2	2		
1478	Բոնաշեն գյուղ, Մոկք	Հռիփսիմե		1		
1478	Բոնաշեն գյուղ, Մոկք	Խանդութ	1	2		
1480	Աղթամար	Կարապետ ստ.	4	2		
1479	Առեստ	Մելիքշահ	3	1		
1480	Աղթամար	Հովհաննես	1			
1481	Կտուց	Վարդան ստ.	4			
1482	Արծկե	Արուան ստ.	1			
1482	Կտուց	Խաթունջան ստ.	2	1		
1483	Արծկե	Բերամ ստ.	6	4		
1483	Արծկե	Դովլաթիար	1	1		
1483	Արծկե	Հովհաննես գրիչ	1			
1483	Էրնկան, Աղբակ	Մարտիրոս ստ.	2			
1484	Կտուց	Ազիզբեկ			1	
1484	Վան	Քարիմշահ	1	1	3	
1484	Վան	Խդրշահ	3	4		
1484	Վան	Սմբատ	1		1	
1484	Վան	Ատոմ	2		1	
1484	Վան	Միրիջան	1			1
1484	Աղթամար	Սաղաղ	4	2		
1484	Աղթամար	Միրիջան	3	1		
1485	Արճեշ	Հովհաննես ստ.	1			
1486	Արճեշ	Սարուղոջ ստ.	1			
1486	Արճեշ	Գորք	2	2		
1486	Արճեշ	Խալիֆ		2		
1486	Արծկե	Ղարիպշահ ստ.	1		1	
1486	Ասպիսնակ, Քաջբերունիք	Դովլաթիար	3	1		
1486	Ասպիսնակ. Քաջբերունիք	Շահրիար	2	2		
1486	Ասպիսնակ, Քաջբերունիք	Բարսեղ գրիչ	1	2		
1486	Սղցա գյուղ	Ազարիա գրիչ	3			
1487	Վարագ	Թուվան ստ.	3	2		1
1488	Վարագ	Սաղաղ	2			
1488	Վարագ	Ղարիպշահ	2			
1488	Վարագ	Ատոմ			2	1
1488	Վարագ	Թումա	3			
1488	Վարագ	Մաղթումշահ	3	1		
1488	Վարագ	Եզդանբախշ	3			
1488	Վարագ	Հովհաննես գրիչ	2			

1489	Ասպիսնակ. Քաջբերունիք	Մաղդաքիար	2	1		
1489	Սոսկոն գյուղ. Արճեշ	Տողան	2	2		
1489	Բազենից վանք. Խիզան	Ստեփանոս ստ.	3			
1489	Շատվան	Աստվածատուր	5		1	
1490	Գինականց գյուղ. Մոկք	Դավիթ գրիչ	2			
1490	Բռնաշեն գյուղ. Մոկք	Առաքել	3			
1491	Արծկե	Միրիջան	2			
1491	Արծկե	Մովսես	2			
1491	Արծկե	Հռուլփաշա	1		1	
1491	Աղթամար	Պողոս ստ.	4	7		
1492	Աղթամար	Միրիջան ստ.	4			
1493	Աղթամար	Հակոբ զծող	1			
1494	Աղթամար	Ամենաավագ ստ.	3			
1497	Խիզան	Հովհաննես ստ.			2	
1497	Աղթամար	Ազիզբեկ	2			
1497	Աղթամար	Միրանշահ	1			
1497	Աղթամար	Ստեփանոս ստ.		4		
1498	Ասպիսնակ. Քաջբերունիք	Թուրվանդ(ա) ստ.		2	1	1
1498	Ասպիսնակ. Քաջբերունիք	Միքայել	2		3	
1498	Ասպիսնակ. Քաջբերունիք	Խաթուն-փաշա	2			
1498	Ասպիսնակ. Քաջբերունիք	Մարշահ	1			
1498	Աղթամար	Կարապետ			3	1
1499	Պատրկի վանք	Հայրապետ		3		
1499	Պատրկի վանք	Մարտիրոս	3	2		
1499	Պատրկի վանք	Մարգար	2			
1499	Էրնկան գյուղ. Աղբակ	Ատոմ	5	6		
1499	Խիզան	Ռուզ	1			
1499	Արծկե	Հովհաննես	2			
1499	Աղթամար	Խամոշ ստ.			4	1
1499	Աղթամար	Թումա գրիչ		1	1	
1499	Խիզան	Գրիգոր ստ.	1			
1499	Ով գյուղ. Խիզան	Հովհաննես	2	2		
1499	Ով գյուղ. Խիզան	Հովհաննես	1			
1500	Վարազ	Գրիգոր	1			

ՅԱՆԿ Բ

Թվական	Վայր	Գրիչ/ստացող	Եղբայր	Քույր	Մահացած եղբայր	Մահացած քույր
1401	Վարագ	Ավետիս գրիչ	2			
1401	Ոստան	Ներուն գրիչ	1	2		
1401	Հիզան	Աստվածատուր ստ.	1	1		
1401	Ռշտունիք	Անհայտ	2			
1401	Խիզան	Գրիգոր ստ.	2		1	
1402	Անանձնասյաստի վանք	Հակոբ	2			
1402	Անանձնապատի վանք	Աստվածատուր	1	2		
1402	Մատենավանք, Խլաթ	Բենիամին	2			
1402	Գամպիլել	Ասաղ	2			
1402	Խիզան	Հովհաննես գրիչ	3			
1403	Աղթամար	Մխիթար ստ.	2	2		
1403	Աղթամար	Դանիել գրիչ	3	2		
1404	Տշող գյուղ, Ռշտունիք	Հովհաննես ստ.	3			
1404	Տշող գյուղ, Ռշտունիք	Ստեփանոս գրիչ	3			
1404	Տշող գյուղ, Ռշտունիք	Ղազար ստ.	1		1	
1404	Աղթամար	ոմն Տիրացու	2			
1408	Ցիսկավանք, Բզնունիք	Հովհաննես գրիչ	2			
1409	Կագթանց գյուղ, Մոկք	Թադեոս ստ.	1	2	2	
1409	Աղթամար	Հովհաննես ստ.	1	1		
1410	Մեծոփավանք, Արճեշ	Թովմա Մեծոփեցի	7	1		
1410	Տշող գյուղ, Ռշտունիք	Հովհաննես ստ.	3			
1410	Մոկք	Ղազար ստ.	3			
1411	Ոստան	Հայրապետ	2		1	
1411	Կասր	Թումա գրիչ	2			
1412	Կոձերաց վանք, Արծկե	Վ(ա)ռդանես գրիչ	5	1		
1413	Խտուաբատ	Գրիգոր գրիչ	3	2		
1413	Վան	Զաքարիա գրիչ	3			
1413	Խիզան	Հովհաննես գրիչ	3			
1414	Մեծոփավանք, Արճեշ	Հունան գրիչ	3			

1414	Ցիպնավանք, Բզնունիք	Մկրտիչ ստ.	1		2	
1414	Սուխարավանք, Արճեշ	Անդրեա	2			
1414	Ոստան	Կիրակոս ստ.	5	4		
1414	Վասպուրական	Հայրապետ ստ.	2	2		
1416	Վան	Կարապետ գրիչ	2			
1417	Ջերմաձոր, Մոկք	Հովհաննես գրիչ	2		1	
1417	Ջերմաձոր, Մոկք	Աստվածատուր ծակոդ	3			1
1418	Վարագ	Նիկողայոս ստ.	3	1	1	
1418	Աղթամար	Թումա գրիչ	2	2		
1418	Վան	Ղազար ստ.	4	1		
1418	Ռշտունիք	Ստեփանոս ստ.	1		1	
1419	Տշող գյուղ, Ռշտունիք	Հովհաննես ստ.	2	1		
1419	Բերկրի	Պետրոս գրիչ	2			
1419	Ցիպնավանք, Բզնունիք	Հովհաննես ստ.	3			
1419	Աղթամար	Անհայտ	3			
1420	Աղթամար	Վարդան ստ.	5	2		
1420	Նարեկ գյուղ, Ռշտունիք	Թաթարբեկ ստ.	2	1		
1420	Նարեկ գյուղ, Ռշտունիք	Իզիտ գրիչ	4			
1421	Աղեթ, Բզնունիք	Հովհաննես ստ.	3	2		
1421	Աղեթ, Բզնունիք	Կարապետ գրիչ	2			
1421	Աղթամար	Հովհաննես ստ.	2	1		
1421	Աղթամար	Թումա գրիչ	2	1	1	
1421	Լիմ	Հովհաննես գրիչ	1		1	
1421	Աղթամար	Սաղաթիել	2	1		
1421	Ծպատի վանք, Մոկք	Թումա ստ.	2			
1422	Խլաթ	Հովհաննես ստ.	2			
1422	Բերկրի	Հովհաննես ստ.	4	4		
1422	Բերկրի	Հակոբ գրիչ	2			
1422	Տկուց վանք, Արծկե	Աստվածատուր ստ.	2			
1422	Վան	Հովհաննես ստ.	3	3		
1424	Մեծոփավանք, Արճեշ	Ստեփանոս ստ.	1		1	
1424	Բերկրի	Հովհաննես ստ.	4	3	1	
1424	Սոգսա գյուղ	Հոհվաննես ստ.	3		1	
1425	Աղթամար	Թումա Մինասենց	1	2		
1425	Բերկրի	Մարտիրոս ստ.	2			
1426	Բերկրի	Պետրոս գրիչ	4			

1426	Վաոնիշատ գյուղ. Ոստան	Էվատշահ ստ.	4			1
1427	Մեծոփավանք, Արճեշ	Մկրտիչ	2		2	
1430	Խոսրովավանք	Ստեփանոս ստ.	2			
1430	Խոսրովավանք	ոմն Մամատիկին	2	1		
1431	Վասպուրական	Հայրապետ ստ.	3	2		
1433	Ուրանց գյուղ. Կարճկան	Ներսես ստ.	4			
1434	Գամաղիել	Ֆիսրո ստ.	2			
1434	Գամաղիել	Հովհաննես ստ.	1		1	
1435	Վան	Ստեփանոս ստ.	2			
1435	Վան	Կարապետ գրիչ	1	1	2	
1436	Սորավանք	Կարապետ ստ.	2			
1436	Աղթամար	Հովհաննես ստ.	4			
1437	Բերկրի	Գրիգոր ստ.	3	2		
1437	Խլաթ	Էվատշահ	3			
1437	Վան	Մարգիս ստ.	1	1		
1437	Արճեշ	Կարապետ գրիչ	4			
1437	Թուցու գյուղ	Դավիթ ստ.	2			
1437	Խիզան	Թումա ստ.	6	1		
1438	Արճեշ	Մկրտիչ ստ.	1	1	2	
1439	Ոստան	Հովհաննես ստ.	2			
1440	Աղթամար	Հովհաննես ստ.	3			
1440	Մեծոփավանք-Մատնեվանք	Ներսես գրիչ	4			
1441	Քաջբերունիք	Գուլփաշա ստ.	1	1		
1441	Աղթամար	Մկրտիչ ստ.	3			
1441	Խլաթ	Հովհաննես գրիչ	4			
1441	Խլաթ	Կարապետ ստ.	4			
1441	Աբրահամանց գյուղ. Մոկք	Մարգար գրիչ	4			
1442	Խիզան	Հովհաննես գրիչ	1		2	
1443	Խլաթ	Հովհաննես ստ.	3	1		
1443	Խլաթ	Աստվածատուր գրիչ	3		1	
1444	Աղթամար	Թումա ստ.	2			
1444	Վարագ	Մարտիրոս ստ.	2	3		
1444	Վան	Մկրտիչ ստ.	1	1	2	
1444	Աղթամար	Գրիգոր գրիչ	2	1	1	
1444	Աղթամար	Քարիմ ստ.	3	4		
1445	Աղթամար	Հովհաննես ստ.	1		1	
1445	Վան	Մկրտիչ ստ.	1		2	
1445	Ոստան	Հակոբ ստ.	2		1	
1445	Արճեշ	Հովհաննես ստ.	4			

1447	Աղթամար	Մովսես ստ.	2	2		
1447	Փասավանք. Մոկք	Թովմա ստ.	3	3	1	
1447	Վասպուրական	Կարապետ ստ.	3			
1447	Վասպուրական	Դավիթ ստ.	4			
1447	Գինեկանց գյուղ. Մոկք	Սարգիս ստ.	2	1		
1447	Գինեկանց գյուղ. Մոկք	Վարդան գրիչ	2			
1449	Աղթամար	Ներսես գրիչ	2			
1449	Աղթամար	Հովհաննես ստ.	5	2		
1449	Ապահունիք վանք	Կարապետ ստ.	1	1		
1450	Խլաթ	Ամիրդոլ ստ.	5	3		
1450	Արճեշ	Վալդան ստ.	5	1		
1451	Ջերմաձոր. Մոկք	Պողոս ստ.	2		1	
1451	Ջերմաձոր. Մոկք	ոմն Զաքարե	4			
1451	Վան	Մարթա ստ.	2	2		
1451	Վան	Կարապետ ստ.	1		2	
1451	Խլաթ	Վ(ա)ղդ(թ)անիս ստ.	2		1	
1451	Խլաթ	Հովհաննես գրիչ	1		1	
1451	Ռշտունիք	Սուքիան ստ.	5			
1451	Խիզան	Հովհաննես գրիչ	1		2	
1452	Վասպուրական	Թումա	3	1		
1452	Աղթամար	Սուլթան-Մելեք ստ.	1	2		
1452	Աղթամար	Մկրտիչ ստ.	6	4		
1442	Խիզան	Հովհաննես գրիչ	1		2	
1452	Վան	Թումա ստ.	3	1		
1452	Արծկե	Հակոբ ստ.	5	2		
1453	Վան	Շահփաշա ստ.	1	2		
1454	Քաջբերունիք	Վարդան ստ.	1		2	
1454	Աղթամար	Ատոմ ստ.	5	2		
1455	Արճեշ	Դավիթ ստ.			3	
1455	Աղթամար	Ստեփանոս ստ.	6			
1455	Փասավանք. Մոկք	Հովհաննես ստ.	5	2		
1456	Գայթիս. Արճեշ	Ամիրբեկ ստ.	2			
1456	Ռշտունիք	Ջեալ ստ.	2	1		
1456	Փասավանք. Մոկք	Իսրայել գրիչ	3			
1456	Շատվան	Ստեփանոս գրիչ	2			
1456	Փասավանք. Մոկք	Աստվածատուր ստ.	3			
1456	Փասավան. Մոկք	Եղիսաբեթ ստ.	3	1		
1457	Լիմ-Սուխարա-Արգելան	Ստեփանոս ստ.	3		1	
1457	Արճեշ	Մխիթար ստ.	1	1	1	
1457	Ոստան	Կարապետ գրիչ	2	1		
1457	Ոստան	Կարապետ ստ.	2	2		

1457	Խիզան	Հովհաննես ստ.	3			
1458	Խառաբաստ	Զաքարե ստ.	3	1	1	
1458	Աղթամար	Ստեփանոս ստ.	3	3		
1458	Աղթամար	Ներսես գրիչ	2			
1458	Վան	Ներսես ստ.	2		3	
1458	Վան	Վարդան գրիչ	2		2	
1458	Կեցնաձոր	Հովհաննես գրիչ	3			
1458	Ասփսթան. Աղբակ	Հովհաննես ստ.	1	1		
1459	Խիզան	Սարգիս ստ.	3			
1459	Շատվան	Մկրտիչ ստ.	3	1		
1459	Շատվան	Զանմելեք ստ.	2	1		
1459	Շատվան	Մելիքսեթ գրիչ	2	2		
1460	Արծկե	Հովհաննես գրիչ	1		3	
1460	Արծկե	Ատոմ ստ.	4			
1460	Արծկե	Ատոմ գրիչ	3	1	1	
1460	Արծկե	Սարգիս ստ.	1	1		
1460	Աղթամար	Թումա ստ.	2			
1460	Աղթամար	Հակոբ գրիչ	2			
1460	Աղթամար	Վարդան ստ.	2	1		
1460	Վան	Ադութ-Խաթուն	4	4		
1460	Խիզան	Վարդան ստ.	4	2		
1461	Աղթամար	Անհայտ	2			
1461	Վան	Մուղալ-Խաթուն ստ.		2		
1461	Շատվան	Հովհաննես ստ.	2	2	2	
1462	Արճեշ	Թումաշահ ստ.	4	2		
1462	Ունձք գյուղ. Քաջբերունիք	Միքայել գրիչ	1	3		
1462	Արճեշ	Խաչատուր ստ.	2			
1462	Աղթամար	Սարգիս ստ.	5			
1462	Կտուց	Ստեփանոս ստ.	8			
1462	Կտուց	Մինաս ծաղկող	1	1		
1462	Վան	Ատոմ ստ.	2			
1463	Արծկե	Էդիլշահ ստ.	1	2	1	
1463	Արծկե	Խոնձա ստ.	1	1		
1463	Կտուց անապատ	Խալիֆա ստ.	3	2		
1463	Աղթամար	Մարտիրոս ստ.	4			
1463	Ռշտունիք	Աստվածատուր ստ.	4			
1463	Ռշտունիք	Մարգար գրիչ	3			
1464	Արծկե	Գուլշատ-Խաթուն ստ.	2	1		
1464	Արծկե	Հակոբ գրիչ	2			
1464	Արգելան-Տուրուբերան	Ղազար	3		1	1
1464	Վասպուրական	Ստեփանոս գրիչ	1	2		
1464	Շատվան	Կարապետ ստ.	2	1		

1465	Վան	Ավետիս ստ.	3	2		
1465	Արճեշ	Խալիմ-Խաթուն ստ.	1	1		
1465	Վասպուրական	Հովհաննես ստ.	4			
1465	Վասպուրական	Դավլաթշահ	2		1	
1466	Մատնեվանք, Խլաթ	Մկրտիչ ստ.	2	1	1	
1466	Աղթամար	Մկրտիչ գրիչ	4	2		
1466	Բոհաշեն, Մոկք	Մխիթար գրիչ	2			
1467	Վան	Ստեփանոս ստ.	3	1		
1467	Վան	Վարդան գրիչ	3			
1467	Ուստան	Հովհաննես ստ.	2	1		
1468	Խիզան	Սահակ ստ.	3	1		
1468	Խիզան	Սարգիս ստ.	4	1		
1469	Արճեշ	Հայ-Խաթուն ստ.	2	1	2	
1469	Արճեշ	Ամիր-Սարգիս	3			
1469	Փասավանք, Մոկք	Ստեփանոս ստ.	2			
1470	Աղթամար	Մկրտիչ ստ.	3	3		
1470	Աղթամար	Հայրապետ գրիչ	2			
1471	Վասպուրական	Վարդան ստ.	2	1		
1471	Խառաբաստ	Գրիգոր ստ.	2	1		
1471	Խառաբաստ	Մելիքսեթ գրիչ	2			
1472	Արջրո վանք, Արճեշ	Աստվածատուր ստ.	2			
1472	Մորի գյուղ	Մովսես ստ.	4			
1472	Վան	Մարշահ	2			
1473	Բերկրի	Մարտիրոս ստ.	3	1	1	
1474	Արճեշ	Աստվածատուր ստ.	1	3	1	
1474	Ծղաքու վանք, Խլաթ	Գուլիհաշա ստ.	1	2		
1474	Ծղաքու վանք, Խլաթ	Պողոս գրիչ	3			
1474	Վան	Հովհաննես ստ.	2	1		
1474	Խիզան	Սահակ ստ.	2			
1474	Խիզան	Մովսես ստ.	2			
1475	Վան	Պետրոս ստ.	2	1		
1475	Խլաթ	Աստվածատուր ստ.	4	2		
1475	Խլաթ	Հովհաննես գրիչ	2			
1475	Արծկե	Գրիգոր ստ.	4			
1475	Բերկրի	Մկրտիչ ստ.	2			
1475	Վան	Հովսեփ ստ.	3	2		
1475	Խիզան	Դամուր ստ.	4			
1475	Վան	Հովհաննես	2			
1476	Արծկե	Ստեփանոս ստ.	4			
1476	Աղթամար	Մինա-Խաթուն ստ.	1	2	1	
1476	Վան	Կարապետ ստ.	2	1		
1476	Վան	Բեկի-Խաթուն	2	2		

1465	Վան	Ավետիս ստ.	3	2		
1465	Արճեշ	Խալիմ-Խաթուն ստ.	1	1		
1465	Վասպուրական	Հովհաննես ստ.	4			
1465	Վասպուրական	Դավլաթշահ	2		1	
1466	Մատնեվանք, Խլաթ	Մկրտիչ ստ.	2	1	1	
1466	Աղթամար	Մկրտիչ գրիչ	4	2		
1466	Բռնաշեն, Մոկք	Մխիթար գրիչ	2			
1467	Վան	Ստեփանոս ստ.	3	1		
1467	Վան	Վարդան գրիչ	3			
1467	Ոստան	Հովհաննես ստ.	2	1		
1468	Խիզան	Սահակ ստ.	3	1		
1468	Խիզան	Սարգիս ստ.	4	1		
1469	Արճեշ	Հայ-Խաթուն ստ.	2	1	2	
1469	Արճեշ	Ամիր-Սարգիս	3			
1469	Փասավանք, Մոկք	Ստեփանոս ստ.	2			
1470	Աղթամար	Մկրտիչ ստ.	3	3		
1470	Աղթամար	Հայրապետ գրիչ	2			
1471	Վասպուրական	Վարդան ստ.	2	1		
1471	Խառաբաստ	Գրիգոր ստ.	2	1		
1471	Խառաբաստ	Մելիքսեթ գրիչ	2			
1472	Արջրո վանք, Արճեշ	Աստվածատուր ստ.	2			
1473	Սորի գյուղ	Մովսես ստ.	4			
1473	Վան	Մսրշահ	2			
1473	Բերկրի	Մարտիրոս ստ.	3	1	1	
1474	Արճեշ	Աստվածատուր ստ.	1	3	1	
1474	Ծղտրու վանք, Խլաթ	Գուլվաշա ստ.	1	2		
1474	Ծղտրու վանք, Խլաթ	Պողոս գրիչ	3			
1474	Վան	Հովհաննես ստ.	2	1		
1474	Խիզան	Սահակ ստ.	2			
1474	Խիզան	Մովսես ստ.	2			
1475	Վան	Պետրոս ստ.	2	1		
1475	Խլաթ	Աստվածատուր ստ.	4	2		
1475	Խլաթ	Հովհաննես գրիչ	2			
1475	Արծկե	Գրիգոր ստ.	4			
1475	Բերկրի	Մկրտիչ ստ.	2			
1475	Վան	Հովսեփ ստ.	3	2		
1475	Խիզան	Դամուր ստ.	4			
1475	Վան	Հովհաննես	2			
1476	Արծկե	Ստեփանոս ստ.	4			
1476	Աղթամար	Մինա-Խաթուն ստ.	1	2	1	
1476	Վան	Կարապետ ստ.	2	1		
1476	Վան	Բեկի-Խաթուն	2	2		

1491	Շատախ	Վարդան ստ.	3			
1492	Աղթամար	Կարապետ գրիչ	2	1		
1493	Աղթամար	Միրիջան ստ.	2		2	
1494	Աղթամար	Ամենաավագ ստ.	2			
1495	Ասպիսնակ. Քաջբերունիք	Բարունակ ստ.	4			
1497	Աղթամար	Մատթեոս գրիչ	2			
1497	Բերկրի	Ստեփանոս ստ.	2	2	1	
1497	Աղթամար	Ստեփանոս ստ.	2			
1498	Բերկրի	Ստեփանոս ստ.	4	2		
1498	Բերկրի	Թումա	4			
1498	Աղթամար	Մուրադ ստ.	3	3		
1499	Պատրկի վանք	Հայրապետ	3		1	
1499	Էրնկան գյուղ. Աղբակ	Խաչիք ստ.	1	1		
1499	Էրնկան գյուղ. Աղբակ	Ատոմ ստ.	4	2		
1499	Խիզան.	Հովհաննես գրիչ	2			
1499	Աղթամար	Խամոշ ստ.	5	4		
1499	Խիզան	Գրիգոր ստ.	2			
1499	Ոլ գյուղ. Խիզան	Վարդան ստ.	3			
1500	Արծկե	Կարապետ ծաղկող	2			
1500	Վարագ	Հալվա ստ.	2	3		
1500	Վարագ	Հովհաննես	3		1	

ՀԱԿՈԲ ՂՐԻՄԵՑՈՒ «ՅԱՂԱԳՍ ԱԶԳԱԿԱՆՈՒԹԵԱՆ» ԵՐԿԸ

Հակոբ Ղրիմեցու «Յաղագս ազգականութեան» փոքրածավալ երկի բնագիրը՝ երկու գրչագիր օրինակների բաղդատությամբ, ընդարձակ առաջաբանով լույս է ընծայել Խորեն Ճլզյանը 1947 թ. Վենետիկում[1]*: Դա այս երկի միակ հրատարակությունն է: Նրա օգտագործած ձեռագրերից մեկը հավանաբար պետք է գրված լինի ոչ վաղ, քան 1708 թ., իսկ մյուսը՝ Խ. Ճլզյանը թվագրում է XV դ. վերջով, թեպետ «Յաղագս Ազգականութեան» այդ ձեռագրի հիշատակարանը անթվակիր է: Անծանոթ լինելով Հ. Ղրիմեցու կենսագրությանը և ձեռքի տակ չունենալով «Յաղագս ազգականութեան» երկի ավելի հին ձեռագրեր՝ Խ. Ճլզյանը հանգել է որոշ ոչ ստույգ եզրակացությունների: Նա, թեպետ, ուշադրություն է դարձրել, որ իր տրամադրության տակ եղած ձեռագրի հիշատակարանում Հ. Ղրիմեցին հայտնում է աշխատության՝ Թումա վարդապետի խնդրանքով Մեծոփավանքում գրված լինելը, սակայն չի կռահել, որ խոսքը Թովմա Մեծոփեցու մասին է: Նա կարծում է՝ Հ. Ղրիմեցին ապրել է XV դարում, իսկ «Յաղագս ազգականութեան» երկը գրել նույն դարի վերջում*[2]*: Այնինչ, արդեն 1389 թ. Հակոբ Ղրիմեցին*

---

[1] Յակոբ Վ. Խրիմեցի, Յաղագս ազգականութեանց բաժանման, Վենետիկ, 1947: Խորեն Ճլզյանը Հ. Ղրիմեցու «Յաղագս ազգականութեան» երկը կոչել է «Յաղագս ազգականութեանց բաժանման»: Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերում հանդիպում են Հ. Ղրիմեցու վերոնշյալ գործի մի քանի այլ վերնագրեր՝ «Յաղագս ազգաբանութեան բաժանմանց», «Վասն ազգականութեան», «Խրատ ազգականութեան», «Վասն խնամութեան» և այլն:

[2] Յակոբ Վ. Խրիմեցի, նշվ. աշխ., էջ 7, 11:

ցին ձեռագիր է հեղինակել և հիշատակարան գրել[1]: Մատենադարանի թիվ 10137 ձեռագրի 281բ–291բ էջերում պահպանվել է Հ. Ղրիմեցու «Յաղագս ազգականութեան»-ի ինքնագիրը: Իր աշխատության վերջում թողած հիշատակարանում Ղրիմեցին հայտնում է գրչության թվականը, այն է՝ ՊԿԵ (1416):

Բացի այդ՝ հրատարակած բնագրում Խ. Ճլզյանը ներառել է Ղրիմեցու մեկ այլ՝ «Վասն պսակի ամուսնացելոց» աշխատությունը՝ կարծելով, թե դրանք մեկ ամբողջություն են: Բանն այն է, որ Մաշտոցյան Մատենադարանի՝ Ղրիմեցու այս երկու աշխատությունները պարունակող չուրջ վեց տասնյակ ձեռագրերի մի մասում է, որ «Վասն պսակի ամուսնացելոց»-ը նախորդում կամ հաջորդում է «Յաղագս ազգականութեան»-ը: Կարծում ենք՝ Խ. Ճլզյանը վերոնշյալ գրչագրերը հրատարակելիս հենց այսպիսի ձեռագրեր է ձեռքի տակ ունեցել, ինչն էլ նրան թույլ է տվել եզրակացնելու, որ «Վասն պսակի ամուսնացելոց»-ը «Յաղագս ազգականութեան» մի մասն է, ուստի և այն զետեղել է հրատարակած բնագրի ամենասկզբում: Արձանագրենք, որ «Յաղագս ազգականութեան»-ի ինքնագիրը (Մատենադարանի Հ^մր 10137 ձեռագիրը), չի պարունակում «Վանս պսակի ամուսնացելոց» երկը: Այն, հավանաբար, գրվել է 1416 թ. վերջում կամ դրանից փոքր-ինչ ուշ:

Հայտնի է՝ 1410-ականների սկզբներին Մեծոփի նշանավոր դպրոցում հանգրվանած Հ. Ղրիմեցին Գրիգոր Տաթևացու «Քարոզգրքի» մեկնությունից հետո՝ 1416 թ., ավարտում է նաև «Մեկնութիւն Տումարի» աշխատությունը և հավանաբար նույն տարվա վերջին ձեռնամուխ լինում «Յաղագս ազգականութեան» երկի ստեղծմանը, որն, ինչպես նշեցինք, ավարտում է նույն տարում: Ուստի, հավանական է, որ «Վասն պսակի

[1] ԺԴ դար, էջ 580: Հ. Ղրիմեցու գործունեության մասին տե՛ս Հակոբ Ղրիմեցի, Տոմարագիտական աշխատություններ, աշխատասիրությամբ Ջ. Էյնաթյանի, Երևան, 1987, էջ 19–20:

ամուսնացելոց»-ը նա գրել է կամ 1416 թ. վերջում կամ հաջորդող տարիներին: Իսկ արդեն հետագայում Հ. Ղրիմեցու նույնաբովանդակ այս գործերը ընդօրինակած գրիչների մի մասը դրանք ղետեղել են կողք կողքի: Եվ, իսկապես, դրանք, կարծես, միմյանց բնական շարունակությունը լինեն. եթե «Յաղագս ազգականութեան» երկում Հ. Ղրիմեցին մեկնում և սահմանում է, թե ազգակցական ինչ հեռավորություն վրա գտնվողները կարող են ամուսնանալ, ապա «Վասն Պսակի ամուսնացելոց»-ը պարզապես քննում և կանոնական օրենքի ուժով կարգավորում է աղջիկների և տղաների ամուսնության չափահասության շեմը: Ելնելով այն բանից, որ Հ. Ղրիմեցու ինքնագրում չկա «Վասն պսակի ամուսանցելոց»-ը, այն չենք ներառում «Յաղագս ազգականութեան» ստորև հրատարակվող բնագրում դրա հետազոտությունն ու քննական բնագրի պատրաստումը թողնելով գալիք ժամանակին:

Խ. Ճլգյանի հրատարակած բնագրում բացակայում է Ղրիմեցու թողած բուն հիշատակարանը և վերջին ընդգրկուն հատվածը, որտեղ հեղինակն ընդհանրացնում է իր աշխատությունը[1]*:*

Ա. Ղլտչյանը, անդրադառնալով Հակոբ Ղրիմեցու ամուսնաընտանեկան հարաբերություններին վերաբերող աշխատություններին, գրում է. «Պետք է ենթադրել, որ այդ վարդապետը ժամանակակիցների մէջ մեծ հեղինակութիւն ունեցող մէկն է եղել, հայ եկեղեցու մի մեծ վարդապետ, որ յանդգնել է կանոնական մի կարգ սահմանել ու հոգևորականութեան հրահանգութիւններ տալ: Հաս ու չհասի աստիճանները որոշելու գործում նա ունեցել է ահագին ազդեցութիւն իր յետնորդների վրայ, նրանով ղեկավարուել են դարեր շարունակ մինչ ի մեր

[1] Տե՛ս Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. Հ՝ 10137, էջ 290ա-291բ:

օրերը»[1]: Անտարակույս, Հ. Ղրիմեցին իր դարաշրջանի երևելի ու գիտակ դեմքերից էր, սակայն նրա խոսքին ուժ էր հաղորդում նաև Թովմա Մեծոփեցու հեղինակությունը: Հ. Ղրիմեցու այս երկու երկերը գրվել են Թովմա Մեծոփեցու պատվերով՝ նպատակ ունենալով կանոնակարգել մարդկանց հուզող ամուսնաընտանեկան մի շարք հրատապ հարցեր: Վարդապետ Հ. Ղրիմեցու ու Թովմա Մեծոփեցու հեղինակությունն արդեն իսկ բավարար էր, որպեսզի այն կիրառություն գտներ իրական կյանքում: Թեպետ Մխիթար Գոշի սահմանած օրենքները եկեղեցական ժողովներում չէին հաստատվել, ինչպես հեղինակն էր ցանկանում, սակայն Խ. Թորոսյանի համոզմամբ՝ Գոշի Դատաստանագիրքը կիրառվել է իրական կյանքում[2]: Ն. Մառն էլ, խոսելով նույն թեմայի մասին, ընդգծում է, որ վարդապետների լայն ժողովրդականությունն ու հեղինակությունը բավարար էր, որպեսզի նրանց հեղինակած կանոնական նորմերը ստանային օրենքի ուժ[3]: Կարծում ենք՝ նույնը կարելի է ասել և Հակոբ Ղրիմեցու ու նրա գործերի պարագայում: Այն, որ դրանք ունեցել են կանոնական նշանակություն, փաստում է Հ. Ղրիմեցու ձեռագրերի այդքան շատ ընդօրինակությունները: Հ. Ղրիմեցու երկերի՝ կանոնական ուժ ունենալու մասին է վկայում նաև այն, որ Ղրիմեցու վերոնշյալ գործերը հիմնականում զետեղված են «Կանոնագիրք Հայոց»-ը պարունակող ձեռագրերում:

---

[1] Տե՛ս Ղլտչեան Ա., Հայոց հին իրավունքը, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1913, N 1, էջ 48:

[2] Տե՛ս Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի, աշխատասիրությամբ Խ. Թորոսյանի, Երևան, 1975, էջ ԼԲ, ԼԹ:

[3] Марр Н., Критика тексты и разыскания по армяно-грузинской филологии, т. 5, СПБ, 1903, с. 35.

Հատկանշական է, որ նա այդ գործին լծվում է Գրիգոր Տաթևացու Քարոզգրքի մեկնությունից հետո՝ կրելով նրա անմիջական ազդեցությունը[1]*:*

Հակոբ Ղրիմեցին թվարկում է ազգակցությունը՝ վերընթաց, վայրընթաց ու կողագիծ ճյուղավորումներով: Նա առանձնացնում է մարմանավոր և հոգևոր ազգակցությունները: Առաջինն արյունակցությունն է, իսկ հոգևորը՝ կնքահայրությունը, որդեգրությունն ու խնամիությունը:

Հետևելով Ներսես Շնորհալուն՝ Հակոբ Ղրիմեցին գրում է, որ արյունը բաղկացած է չորս մասից[2]*, ուստի նույն հորից ծնված որդիները կամ քույրերն ունեն արյան չորս ամբողջական մասը, թոռները՝ երեք մասը, թոռների որդիները՝ երկու մասը, իսկ ահա թոռների թոռները՝ ընդամենը մի մասը, իսկ թոռների թոռների երեխաներն այլևս արյունակից-ազգակիցներ չեն և կարող են ամուսնանալ*[3]*: Ըստ երևույթին, Հայաստանում այդ*

---

[1] Հ. Ղրիմեցին իր «Յաղագս Ազգականութեան» աշխատությունը գրելիս ամենից շատ օգտվել է Գրիգոր Տաթևացու «Գիրք Հարցմանց» ստվարածավալ երկից (տե՛ս Գրիգոր Տաթեւացի, Գիրք Հարցմանց, Երուսաղէմ, 1993, հատոր IX, պրակ ԼԶ, Վասն ազգականութեան հարցումն, էջ 611–612):

[2] Տե՛ս Ներսես Շնորհալի, էջ 134–135:

[3] Մեր ուսումնասիրության շրջանակում չէ այն հարցը, թե վաղքրիստոնեական Հայաստանում և հետագա դարերում ազգակցական ո՞ր աստիճանից (սլորտ) էր թույլատրվում ամուսնությունը և ինչ փոփոխություններ է այն կրել: Նշենք միայն, որ այդ հարցը քննարկվել է դեռևս Շահապիվանի ժողովում (տե՛ս Ակինեան Ն., Շահապիվանին ժողովին կանոնները, հ. 1, Պրակ 2, Վիեննա, 1950, էջ 82–85): «Կանոնագիրք Հայոց»-ում տեղ են գտել մերձամուսնություններն արգելող օրենքներ (տե՛ս «Կանոնագիրք Հայոց», հ. 2, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Երևան, 1971, էջ 12): Մխիթար Գոշն էլ աչքաթող չի արել այս թեման և սահմանել, թե որ պորտից կարելի է ամուսնանալ (տե՛ս Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի, էջ 112–124): Այս հարցի կապակցությամբ ավելի մանրամասն տե՛ս Հովհաննիսյան Ս. Հ., Ամուսնա-ընտանեկան իրավունքը վաղ ավատական Հայաստանում (IV–IX դդ.), Երևան, 1976, էջ 225–244, Յակոբ Վ. Խրիմեցի, նշվ.

ժամանակ հաճախակի էին դարձել ազգականների (ոչ մերձավոր ազգականների, այլ մի քանի աստիճան հեռավորության վրա գտնվող) միջև ամուսնությունները: 1444 թ. հիշատակագիրներից մեկը, խոսելով հետին ժամանակի մասին, հայտնում է, որ եկեղեցական կարգը խախտվել էր՝ առաջին հերթին մատնացույց անելով ազգակցությունը, կնքավորությունն ու խնամիությունը[1]*:*

Հետաքրքիր է, որ Հ. Ղրիմեցին ընդդիմանում է, ըստ երևույթին, այն հոգևորականների դեմ, որոնք պնդում են, թե պետք է ամուսնանալ մեկ աստիճան ավելի ուշ («թե զմարմնաւոր հինգերորդ գլուխն ասեն խնամենալ, որ են ձագ թոռնիայքն և ապա վեցերորդքն առնուն զիրար, որ են որդիք ձագ թոռնիայցն»[2]*): Նա, մարդկանց դժգոհությանն ականջալուր, սահմանում է, որ թոռան թոռների երեխաներն արդեն արյունակիցներ չեն և կարող են առանց մտատանջության ամուսնանալ («Եւ հինգերորդն, որ օտարացան յազգականութենէ, այսինքն՝ ձագ թոռնիայքն, նոքա առանց ամենայն խղճի առցեն զիրար»*[3]*):*

Հ. Ղրիմեցին սահմանում է նաև կնքահայրության, որդեգրության ու խնամիության դեպքում ամուսնական արգելքները և մատնանշում այն շեմը, որից հետո թույլ է տրվում ամուսնությունը: Ասվածն ավելի առարկայական դարձնելու համար նա կազմել է աղյուսակներ: Խ. Ճլզյանը Հ. Ղրիմեցու մասին գրում է. «Որքան բարեգութ, նոյնքան արդարդատ և խիստ զբաղած է իր ազգին բարոյական վերածնունդով»[4]*:*

աշխ, էջ 12–17, **Մելիք-Թանգեան Ն.**, Հայոց եկեղեցական իրավունքը, Գիրք Ա., Շուշի, 1903, էջ 80, 94, 241, 315, 334, 432 և այլն:

[1] ԺԵ դար, Մասն առաջին, էջ 561:

[2] Տե՛ս Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. Հայ 10137, էջ 289բ:

[3] Նույն տեղում, էջ 290ա:

[4] Յակոբ Վ. Խրիմեցի, նշվ. աշխ., էջ 11:

Ստորև ներկայացնում ենք Հ. Ղրիմեցու՝ Մաշոցյան Մատենադարանի Հ՚ 10137 ձեռագրում առկա «Յաղագս Ազգականութեան» երկի ինքնագիրը[1] կցելով նաև աղյուսակները:

«Յաղագս ազգականութեան»

(281բ)Գիտելի է, զի ազգականութիւն տարորոշեալ անձանցնէ և ոչ անհատին: Զի անհատն ինքնէ որ ոչ հատանել կարէ և ոչ բաժանիլ, և ինքնինքեան ազգ զիա՞րդ կարէ լինել: Վասն որոյ ազգականութիւն տարորոշեալ անձանցնէ, որ լինին. Բ.(2) եղբարք եւ կամ քոյրք եւ կամ քոյրք և եղբարք: Եւ որք ի սոցանէ ածանցեալք յառաջ գան և տարանջատին անձամբք ի միմեանց: Իսկ այր և կին թէպէտ տարորոշք են ըստ դիմացն, սակայն աստուածային հրամանաւն մի մարմին լեալ են, եւ ըստ այսմ զանհատի ունին զտեղի:

Ապայ յայտնի է, զի ծնօղքն ոչ են ազգականք, այլ են այր և կին և մի մարմին: Այլ ազգականութիւն ի սոցանէ սկիզբն առնու ըստ Դ.(4) կերպի՝ ի վերուստ որպէս սոցա հայրն և մայրն, ի ներքուստ որպէս որդիքն սոցա, ի յաջմէ՝ ընդանիք առն, ի ձախմէ որպէս ընդանիք կնոջն՝ քոյրք և եղբարք:

Իսկ որդիք, որ ի սոցանէ յառաջ գան, ունին զբոլոր արիւն ազգականութեանն, և թոռունքն՝ զերրորդ մասն, և որդիք թոռանցն՝ զերկրորդ մասն, և թոռունք թոռանցն, որ է թոռնիայքն՝ զմի մասն: Եւ աստ վճարի արիւն ազգականութեանն, սոքա խնամենան, և որդիք սոցա, որ են ձագ թոռնիայքն, առնուն զիրար: Եւ ընդ դրոշմեալ տփերոյդ տե՛ս ի միջին տուփն, որ այր և կին, հայր և մայր է գրած և ի վերայ սոցա խաչ: Ի

[1] Ստորև ներկայացվող բնագրում փակագծերում նշել ենք ձեռագրի էջերը, բացել հապավումները և կետադրել ըստ հայերենի արդի կանոնների:

ներքոյ սոցայ Բ. (2) եղբարքն, որ զաւակ են սոցա, չխնամենան: Եւ որդիք եղբարցն չխնամենան: Եւ թոռունք եղբարցն չխնամենան, եւ թոռնիայք եղբարցն սոքա խնամենան: Եւ որդիք սոցա, որ են ձաք թոռնիայքն, առնուն զիրար՝ որպէս դրոշմեալ է ի տփերդ:

Իսկ տփերքն, որ ի վերոյ միջի տփին են, ուր այր և կինն է գրած և խաչն ի վերայ, ուր հարքն և պապքն են առն և կնոջն: Յորժամ պապուն պապուն, որ ի վերի տուփն է և փոքրիկ խաչն ի վերայ, թէ նոցա այլ թոռունք լինենայ ի յայլ տղայոց, որ յիւրեանց ժամանակն հասեալ լինենան, որ ինքեանք և նոքա պապուն պապուն թոռունք լինենան, նա խնամենան, և մէկ մէկի զիւրեանց տղայքն տան: Եւ թէ իւրեանց պապուն հօրն այլ (282ա) թոռներ լինենան, նա իւրեանց որդիքն խնամենան: Եւ թէ իւրեանց պապուն այլ թոռներ լինենան, նա իւրեանց թոռներն խնամենան: Եւ թէ իւրեանց հօրն այլ թոռներ լինենան, իւրեանցն քուերց և եղբարց թոռունք լինենան, նա իւրեանց թոռանց տղայքն խնամենան, որ թոռնիայքն առնուն զիրար: Եւ տե՛ս ի կարմիր և ի սև թելերդ, որ քարշել եմ ի տփերդ: Եւ մեղաւորիս Աստուած ողորմի ասա՛, որ յաղիւսակդ աշխատեցայ: Շրջէ զթուղթդ և տե՛ս զթելքն ի տուփսն աղիւսակիդ: ((282բ, 283ա) տե՛ս էջ 83–84):

Հաւրքուրորդիքն և քեռորդիքն չխնամենան: Հօրքուրոջ թոռունքն և քեռուն թոռունքն չխնամենան: Հօրքուրոջ թոռնիայքն և քեռուն թոռնիայքն խնամենան և սոցա տղայքն առնուն զիրար, որ է հօրքուրոջ ձագ թոռնիայն և քեռուն ձագ թոռնիայն, որ է ի ներքին տուփսն, որ գրած է, թէ առնուն զիրար: Այլ և զայս գիտեա՛, թէ հաւրքուրորդիք լինին և թէ քեռորդիք (283բ) և թէ հաւրքուեր դստերք և թէ քեռէդստերք և թէ հօրքրորդիք և քեռէդստերք և թէ քրդստերք և քեռորդիք միապէս են որպէս հօրքրորդիք և քեռորդիք, զի չկա զանազա-

նութիւն ի յարու և յէգն, որ չխաբուիս, զի այս այլազգեայ է, որ զէգն օտարացուցանեն և ոչ քրիստոնէից: Զի եղբայրն և քոյրն, որ պապ և մամ են թոռներուն, նոքա յիւրեանց հօրէն, որ ի վերի մեծ տուփն է և խաչն ի վերայ, զարիւնն համահաւասար ունին. ամենայն թոռնիայքն խնամենան, և ձագ թոռնիայքն առնուն զիրար:

Այսպէս իմայ և զհօրեղբօր որդոց զուստերքն և զդստերքն, նոյնպէս և զմօրքուրոջ զդստերաց զուստերքն և զդստերքն իմայ, սոցա ամենեցուն թոռնիայքն խնամենան և ձագ թոռներն առնուն զիրար՝ որպէս որ դրոշմեցի զտփերդ, յայտնի և առանց տարակուսանաց իմաստուն մտաց:

Բայց թէ մէկն թոռնիայ լինի և մէկն ձագ թոռնիայ, չի հասնիր, զի պարտ է, որ ի հասարակ պապէն և մամէն, որ երկու ձագ թոռնիայցն հաւասարէ, որ է ապոպապն և ապոմամն, որ է ի վերի մեծն տուփն և խաչն ի վերայ: Ի նոցանէ Ե. Ե. (5–5) գլուխ գայ մինչ ի թոռնիայքդ և վեցերորդքն, որ են ձագ թոռնիայքդ, առնուն զիրար:

Իսկ ի յառանձնակի և յատուկ պապերուն և մամուն, որ ի ներքոյ վերի մեծ տփին են, որ ապոպապն է և ապոմամն: Թէ երկու եղբարք են և թէ եղբայր և քոյր և թէ Բ. (2) քոյրք, պարտ է, որ ի նոցանէ Դ. Դ. (4–4) գլուխ իջանէ մինչ ի թոռնիայքդ, որ խնամենան՝ որպէս և համար տփերոյդ ցուցանէ և ապա Ե.երորդքն (5-րդ), որ են ձագ թոռնիայքն, առնուն զիրար:

Իսկ յորժամ մէկն թոռնի(այ) լինի և մէկն ձագ թոռնիայ, նա թոռնիայի կողմն Գ.(3) է անցեալ, ասա գլուխ մի պակաս է, (284ա) բայց ձագ թոռնիային լման է, զի Դ.(4) է և կու պիտի, որ Բ.(2) կողմն Ը.(8) գայ: Բայց թէ մէկն թոռնիայ լինի և մէկ այլն ձագ թոռնիայի տղայ, այս ուղիղ է: Զի թէ ի թոռնիայի

կողմանէն գլուխ մի պակաս է, նա ի ձագ թոռնիայի կողմանէն գլուխ մի աւելի է, զի Է.(7) է, որ լինի դարձեալ Ը(8):

Եւ թէ մէկն թոռն լինի և մէկ այլն ձագ թոռնիայի թոռն, և այս ևս ուղիղ է, զի Ը(8) է: Զի յորժամ ի մի կողմանէն գլուխ մի պակաս լինի, նա պարտ է, որ ի միւս կողմանէն գլուխ մի աւելի լինի, որ Ը.(8) գլուխն անպակաս գտանի, զի այս ի լման թիւ է, և կու հասնի, որ առնուն զիրար:

Բայց և զայս ևս գիտելի է, զի են ի յեղբարց, որ կիսեղբարք են և կիսաքոյրք, զոր խորթս ասեն: Եւ այս Բ.(2) կերպիւ լինի, զի է որ յերկու հօրէ լինի և ի մի մօրէ, և է որ յերկու մօրէ լինի և ի մի հօրէ: Սոքա զանազանին, զի այնոցիկ, որոց մարքն երկու է և հայրն մի, սոքա հարազատ եղբարք են և զարիւն ազգականութեանն ի հօրէն բոլոր ունին: Սոցա թոռնիայքն խնամենան ի հետ այլ եղբարցն և քերցն, և ձագ թոռնիայքն առնուն զիրար:

Ապա թէ յերկու հօրէ լինի և ի մէկ մօրէ, սոքա զկէս արեանն ունին, զի կինն կէս է, և զաւակքն ի նմանէ ոչ կարէն առնուլ զարիւն ազգականութեանն ի լման որպէս ի հօրէն: Սոցա թոռունքն խնամենան և թոռնիայքն առնուն զիրար: Եւ զմեղաւոր գծողս յիշեա՛, աղաչեմ: ((284բ) տե՛ս էջ 85):

Այսքան յաղագս մարմնաւոր ազգականութեան, որ ըստ վարդապետաց սրբոց դրոշմեցաք զտուփսդ ի յաղիւսակդ, չորիւք գլխօք վճարել զարիւն ազգականութեանն, ըստ չորից տարերցդ չարախառնութեան մարմնոյն: Եւ Քրիստոսի, փառք յաւիտեանս, ամէն:

Ծանի՛ր և զայս ուշիմ մտաւք, զի մարմնաւոր ծնօղքն չեն ի հաշիւ գլխոյ ազգականութեան, քանզի հայր և մայր են զաւակացն, այլ ի յորդիքն առնու սկիզբն ազգականութեանն, և Դ.(4) գլուխ իջանէ ի մարմնաւոր ծնօղացն և հինգերորդն (5-րդ) առնուն զիրար: ((285ա) տե՛ս էջ 86):

Այսպէս և ի հոգևորն տե՛ս, զի կնքահայրն սանին հոգևոր ծնող եղաւ և հետ մարմնաւոր ծնողին կնքաւոր դարձաւ, զի տղայն ի գիրկն կնքահօրն դրոշմեցաւ, կնքեցաւ և մեռոնեցաւ: Սա ի յաղդականութենէ հաշիւ չէ, այլ ի հոգևոր ծնողութեան և հոգևոր ազգակցութիւնն սկիզբն առնու ի կնքաւորաց յորդիսն:

Վասն որոյ պարտ է, որ ի հոգևոր ծնողէն իւր մարմնաւոր որդիքն Գ.(3) գլուխ իջանեն: Նոյնպէս և ի կնքաւորէն, և սոքա խնամենան միմեանց, և չորրորդն, որ ձագ թոռնիայքն են, առնուն զիրարս որպէս դրոշմեալ է ի տուփսդ:

Դարձեալ գիտացի՛ր զի մարմնաւոր ծնողքն, որ են ի վերին տուփսն և խաչն ի վերայ, մարմնաւոր ձագ թոռնիայքն, որ առնուն զիրար, ոչ (285բ) թէ նոցա են ձագ թոռնիայք, այլ որդոց իւրեանց, այսինքն՝ եղբարցն կամ եղբօրն և քրւերն և կամ քերցն, այլ հոգևոր ձագ թոռնիայքս ծնողացն են ձագ թոռնիայք, որ են կնքաւորքն, վասն որոյ մարմնաւոր ծնողաց զաւակաց տուփքն Ե. (5) են և հոգևորին՝ Դ.(4):

Յակոբին պապուն եղբայրն խնամենայ հետ իւր կնքաւորոջ Թորոսի որդուն: (Յ)ակոբին հօրեղբայրն խնամենայ հետ իւր կնքաւորոջ Թորոսի թոռինն: Նոյնպէս և Թորոսին թոռն հետ իւր կնքաւորոջն Յակոբին և նոցա տղայքն առնուն զիրար: Եւ տե՛ս յիմաստասիրական աղիւսակդ, զկարմիր և զսև թելսդ, որ քաշեալ է ի տուփսդ, և զմեղաւոր գծողս յիշեա՛ ի տէր: ((286ա, 286բ) տե՛ս էջ 87–88):

Զորօրինակ մարմնաւոր ծնողն թէ մի որդի ունի և թէ Ժ(10) կամ այլ առաւել և նըւազ, ամենեցունցն ծնող է, և ծնեալքն ի նմանէ նմա որդիք են և եղբարք միմեանց: Այսպես և կնքոյհայրն որքան սան ունենայ, նա ամենեցուն հոգևոր ծնող է, և սաներն նմա հոգևոր զաւակք են և միմեանց հոգևոր եղբարք: Սոքա չխնամենան և ոչ որդիք սաներուն, և թոռունք

սաներուն խնամենան, և թոռնիայքն առնուն զիրար որպէս ի տուփսդ տեսանես: Այսպէս և եղբարք և քոյրք սաներուն ոչ խնամենան, զի որպէս սաներն միմեանց հոգևոր եղբարք են և կամ քոյրք և եղբարք, նմանապէս և մարմնաւոր եղբարքն և քոյրքն սաներուն միջնորդութեամբ եղբարցն և քերնց իւրեանց եղեն միմեանց հոգևոր եղբարք և քոյրք: Վասն որոյ և սոցա թոռունքն խնամենան և թոռնիայքն առնուն զիրար թէ՛ հետ միմեանց տղայոցն, և թէ՛ հետ եղբօր և կամ քրւ(287ա)էր սանակցի տղայոցն:

Եւ թէ ոք ասիցէ ախմար մտօք, թէ իմ կնքաւորն զայլ օտար մարդոյ տղայ սան առել է, ես ո՞վ եմ, և նա ո՞վ, որ զիմ կնքաւորոջ սանն իմ տղային չառնում: Ասեմք, թէ որպէս օտար են հարսն և փեսայն ի միմեանց, նոյնպէս և ընտանիք նոցա: Բայց միաւորութեամբ հարսինն և փեսային՝ եղեն օտար ընտանիքն միմեանց ընտանիք և ազգակիցք: Այսպէս, թէպէտ քո կնքաւորոջ կնքաւորն օտար է ի քէնէ, բայց երբ կնքաւորոջն կնքաւոր եղև, համայն և քո է կնքաւոր: Վասն այն սաներն չկարեն խնամենալ և ոչ որդիք նոցա, և ոչ քոյրք և եղբարք նոցա՝ որպէս յայտնի ասացաք:

(287բ) Թորոսին և Պողոսին թոռներն խնամենան: Թորոսին և Պողոսին եղբօր թոռներն խնամենան հետ մէկմէկի թոռներու՝ որպէս կարմիր թելքն է քարշած ի ներքին տուփք թոռներուն: Նաև հետ միմեանց թոռներուն խնամենան՝ որպէս սև թելն է քաշած ի նոյն ներքին տուփք թոռներուն: Թորոսի պապու եղբայրն խնամենայ հետ Պողոսին, նոյնպէս և Պողոսին հետ Թորոսին: Թորոսի հօրեղբայրն խնամենայ հետ Պողոսի որդոյն, նոյնպէս և Պողոսին՝ հետ Թորոսին: Եւ տե՛ս ի կարմիր թելքն, որ քարշեալ է ի վերին տփերուն ի միջին տուփսն:

Զի Յակոբու երկու սանքն՝ Թորոսն և Պողոսն, մէկմէկի հոգևոր եղբարք են, և թէ սանքն արու և էգ լինին՝ քոյր են և

եղբայր: Եւ թէ մարմնաւոր եղբարքն ոչ խնամենան և կամ քոյր և եղբարքն ոչ առնուն զիրար, զի մեղք մեծ է: Ապա որքան 'ահագին և սաստիկ մեղք ոչ լցէ, յորժամ հոգևոր եղբարքն խնամենան և կամ հոգևոր քոյր և եղբարքն առնուն զիրար: Վասն որոյ և ըստ երից մասանց հոգւոյն դրոշմեցի Գ. Գ.(3-3) գլխով զտուփսդ ի յաղիւսակդ, որ նոքա խնամենան, և նոցա ուստերքն և դստերքն առնուն զիրար: Եւ ազատ լիցին ի պիղծ և ի չար խառնակութեանց և յանիծից հարցն, այլ և յայրեցմանէ խղճի մտաց, որ տանջէ զնոսա ի խառնակ գործս շաղախութեանց: զՄեղուցեալ գծողս աղաչեմ յիշել ի տէր: ((288ա, 288բ) տե՛ս էջ 89–90):

(289ա) Ծանի՛ր որդի և զայս ուշիմ մտօք, որ միջին տուփն, ուր խաչերն է՝ կնքահայրն է: Սորա մարմնաւոր որդին և հոգևոր որդիքն, որ են սանքն, նոքա հոգևոր եղբարք են, չխնամենան և ոչ որդիք իւրեանց, այլ թոռունքն խնամենան և թոռնիայքն առնուն զիրար: Եվ որ սոցա թոռնիայք են կնքապապուն ձագ թոռնիայք են, զի կնքահօրն մարմանւոր և հոգևոր թոռնիայքն խնամենան՝ որպէս ի տուփսդ տեսանես, և ձագ թոռնիայքն առնուն զիրար: Եւ կնքահօր պապու եղբարքն խնամենան հետ իւր սաներուն, և հօրեղբարքն խնամենան հետ իւր սանի որդոցն՝ որպէս ի կարմիր և ի սև թելքդ տեսանես, որ քաշած է ի տուփսդ: Եւ զգծողս յիշեա՛, աղաչեմ:

Իսկ օրինաւոր ազգականութիւն է, որ մարդ զայլոյ տղայ իւր որդեգիր առնէ, որ է հոգեզաւակ: Սա միայն է ազգակից առն այնորիկ, որում որդիացաւն և ընտանեաց նորա: Զի թէ ուստր է և կամ դուստր, որ եղև հոգեզաւակ, ոչ կարէ տալ նմա զմարմնաւոր ուստր իւր և կամ զդուստր, որ արար զնա հոգեզաւակ: Նաև ոչ հոգևորն, որ լինենան սան նմա, զի նոքա մարմնաւոր և հոգևոր զաւակ են նմա, և սա՝ օրինաւոր, այլ թէ հոգեզաւակին, որ է օրինաւոր որդի իւր: Թէ նորա այլ եղբարք և քոյրք լինի, կարէ հարսնացուցանել և փեսայացուցանել ի

տղայս իւր, զի հոգեզաւակն միայն եղև նմա օրինաւոր որդի: Եւ քոյրք և եղբարք նորա օտարք են ի նմանէ և յընտանեաց նորա, որ արար զնա հոգեզաւակ:

Զորօրինակ առեալ ուղէշ մի ի ծառոյ և պատուաստեսցես զնա յայլ ծառ: Նա, որ պատուաստեցաւ ի ծառն, ինքն միայն միացաւ ի ծառն յայն, յոր պատուաստեցաւն, իսկ այլ ուղէշքն, որ յիւր ծառն մնացին, նոքա օտար են ի ծառէն, յայն յորս ինքն պատուաստեցաւ:

Նոյնպէս և հոգեզաւակն իւր ծնօղացն միայն ինքն եղև օրինաւոր որդի, այնմ որում որդիացաւ: Իսկ այլ քոյրք և եղբարքն, որ առ իւր մարմնաւոր ծնօղքն մնացին, նոքա օտար են ի նմանէ, որում ինքն որդիացաւ: Վասն այն կարէն նոքա հարսնանալ և փեսայանալ ի յօրինաւոր քոյրսն և յեղբայրսն (289բ) իւր, բայց ինքն՝ ոչ:

Զի օրինօք որդեգրութեանն եղև եղբայր և կամ քոյր ուստերաց և դստերաց առն այնմիկ, որում եղև հոգեզաւակ և օրինաւոր որդի: Դարձեալ զի մարմնաւոր սերմն արեանն ի բազում անձինս ներգործէ, նոյնպէս և զօրութիւն հոգւոյն սրբոյ ի ձեռն աւազանին: Իսկ այս սոսկ կամացն միայն է որդի և կամքն ի մէջ բազմացն, ի յանհատն միայն ներգործէ, քանզի ի յորս հաճի զնոյնն օրինաւոր որդիութեանն արժանի առնէ:

Դարձեալ այլ ևս յայտնի, զորօրինակ ի մէջ բազում նշխարացն, մինն միայն յորս դիտաւորութիւն քահանային լինի, նա միայն աստուածանայ, իսկ այլքն ամենայն մնա հաց սոսկ:

Այսպէս և այս ի մէջ բազում եղբարցն և քերցն, ի յորս հաճեցաւ և որդիացոյց, նա միայն եղև օրինաւոր որդի և ազգակից նմա, իսկ այլ եղբարքն և քոյրքն օտար մնացին որպէս և էին յառաջ, քան զորդիանալն եղբօրն իւրեանց: Եւ Քրիստոսի Աստուծոյ, ամենայն փառք յաւիտեանս, ամէն:

Դարձեալ զի այս տղայս, որ որդեգիր եղև թէ լիցի առն այն ուստր կամ դուստր, որ որդիացոյցն, նա իւր մարմնաւոր

տղայքն և իւր որդեգիրն ոչ կարեն խնամենալ, այլ իւր թոռներքն խնամենան, և թոռնիայքն առնուն զիրար: Զի որդեգիրն բանիւ և կամօք լինի, վասնզի բանից և կամաց են զաւակք, և բանն կրկին է, այսինքն՝ ներտրամադրեալն և յառաջ բերեալն: Նոյնպէս և մասունք մտացն իմացումն է և կամքն: Վասն այն ի կրկին ծնունդն է խնամութիւն: Եւ կրկին ծնունդ սոյնպէս իմա՛յ զտղայոցն զմինն մարմնաւոր ծնունդ առն, որ որդիացոյց և զորդեգիրն բանին և կամացն ծնունդ: Իսկ երկրորդ ծնունդն է տղայքն սոցա, նոքա խնամենան, և նոցա տղայքն առնուն զիրար:

Դարձեալ կրկին իմա՛ զխրատ հասարակ ազգականութեանցս բաժանման, զի են ոմանք, որ ի մարմնաւոր զհինգերորդ գլուխն ասեն խնամենալ, որ են ձագ թոռնիայքն և ապա վեցերորդքն առնուն զիրար, որ են որդիք ձագ թոռնիայցն: Բայց այս ոչ է հաւանելի հասարակ տեսութեան մերոցս և օտարաց: Մանաւանդ զի տրտունջ առնեն և արհամարհեն զասացեալս, քանզի ասեն թէ արգելումն ազգականութեանն ի շաղաշարութիւն զուգաւորութենէ, և ոչ ի խնամութեանն:

Զի ի չորրորդ գլուխն, որ է թոռնիայն, վճարեցաւ ար(290ա)իւնն և հինգերորդն, որ ի սոցանէ ծնան՝ ձագ թոռնիայքն, նոքա աւտարք են, ընդէ՞ր ոչ առնուն զիրար: Եւ այս յիրաւի է, զի օտարքն առնուն զիրար: Վասն այն մեք ի մարմնաւոր վչորրորդ գլուխն դրոշմեցաք ի տուփսդ խնամենալ, որ են թոռնիայքն: Եւ հինգերորդն, որ օտարացան յազգականութենէ, այսինքն՝ ձագ թոռնիայքն, նոքա առանց ամենայն խղճի առցեն զիրար:

Այսպէս և օրինաւորն, որ է հոգեզաւակն, երկրորդն խնամենան և երրորդն, որ օտարացան, առնուն զիրար: Եւ այս այսքան շատ լիցի, որ ցուցեալս եղև ի մէնջ: Նոյնպէս և հոգևորն երրորդն խնամենան և չորրորդն, որ աւտարացան, առանց ամենայն խղճի առցեն զիրար:

Եւ, Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ամենայն մերոյ վայելէ փառք և պատիւ, ընդ հօր և ամենասուրբ հոգւոյն, այժմ և յաւիտեանս յաւիտենիւ, ամէն:

Արդ, ով սուրբ բաբունապէտդ հեզահոգի, ընկալ զսակաւ ընծայս ի տրխեղծ մատանց և յանարժան անձնէ իբրև զիերևէշս այրոյն Լոմայի: Ի քումդ յընդարձակութեան գանձարանի սրտիդ սեղենեկի և ըստ կորովի մտաց քոց զպակասն լցցես և զաւելորդն կշռեսցես: Զի եղբայր յեղբօր է օգնեալ իբրև զքաղաք ամուր և բարձր ասացաւ, զի ըստ տուեցելոյ շնորհաց սուրբ հոգւոյն, կար մեր այս էր: Ողջ լե՛ր ողջունեալդ ի հոգւոյն սրբոյ եւ զմեզ ի սուրբ աղօթից քոց և յանկեղծ սիրոյ մի՛ մոռանար, աղաչե՛մ, աղաչե՛մ: Եւ թէ մահու ձայն լսես ի սէրն Քրիստոսի, Աստուած ողորմի հրամէ քո սուրբ բերանովդ մեղաւոր հոգւոյս, թեև չեմ արժանի:

Գրեցաւ ի թվականութեանս հայոց ՊԿԵ (1416) ի հռչակաւոր վանքս Մեծոփոյ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և սուրբ կուսին և սուրբ վարդապետաց գերեզմանացս: Արդ, աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնոյք և կամ օրինակէք մեղաւոր Յակոբ վարդապետիս Աստուած ողորմի հրամեցէք ինձ: և ծնողաց իմոց: Եւ մարդասէրն Աստուած, ողորմեսցի ձեզ և ծնողաց ձերոց, և նմա փառք յաւիտեանս յաւիտենից: (290բ, 291ա) տե՛ս էջ 91–92):

Ընթեռնլով իմ զխրատ աստիճանաց ազգականութեան մեծ աշխատութեամբ հասու եղէ ի դրոշմած աղիւսակաձև աստիճանացն իւրաքանչիւրցն հանդիպողութեան, թէ որ որոյ զուգակշռի և վասն անուանցն ևս նրբախաւսութեան հարկաւորապէս: Ապա դրոշմեցի ի բոլորակի վասն դիւրահաս գոլով ուսումնասիրաց, վասն որոյ և զանուանսն ևս պարզ եդի, զի յընթեռնուլն զբուն դրոշմածն մարթասցես վերահասու լինել:

Եւ է սկիզբն աշտիճանացս միջին բոլորն, որ է հայրն և մայրն, որդի և դուստր ի մի աստիճան, զի առաջին աստիճան

սոքա են, և այնպէս հեռանալ սկսանին մինչ ցվերջն, որ ասէ ապոստաղն, այսինքն՝ է պապուն պապն: Ապ եկթոռն, (291բ) որ է թոռինն թոռն: Եկթոռն եղբաւրն թոռնն է: Եւ որ ասէ երկպապ, է հաւրն պապուն պապ: Երեք պապն՝ պապուն պապուն պապ: Նոյնպէս և երկթոռն՝ որդոյն թոռինն թոռն, երեք թոռն՝ թոռին թոռինն թոռն: Ընդանի՝ հաւրեղբայր, ընտանիա՝ մաւրքոյր: Ընտանին արական է, ընտանիայն և թոռնիայն՝ իգականք: Արդ, որք ընթեռնելով զբունն վերահասու լինի մերոց աւժանդակեալ, թէ կամեսցի փոխել զխրատս աշտիճանացն, մի իշխեսցէ թողուլ զհինն, որ է աղիւսակաձև դրոշմածն, զոր առաջնոց վեհիցն է աշխատասիրեալ: Բայց թէ և զբոլորս դրոշմեսցէ առընթէր, ինքն գիտասցէ, միայն զհինն մի թողցէ:

(282բ)


պապու
պապ
պապու
հայր
պապ
հայր
հայր
հայր
պապու
պապ
պապու
հայր
պապ
հայր
հայր
այր և կին
հայր և մայր
եղբայր
լման արիւն է՝
չխնամենան
եղբայր
որդի
Գ. (3) մասն է՝
չխնամենան
որդի
թոռն
Բ. (2) մասն է՝
չխնամենան
թոռն
թոռնիայ
Ա. (1) մասն. աստ
վճարեցաւ արիւն
թոռնիայ
ազգականութեանն, սոքա խնամենան.
և սոցա տղայքն առնուն զիրար, որ է ի
ներքին տփերոյ։
ձաց
թոռնիայքս
առնուն զիրար
ձաց
թոռնիայքս
առնուն զիրար

(283ա)


Այր և կին մի մարմին են և են հայր և մայր զաւակացն և ապաստաղ և ապամայր ձագ թոռնիայցն:
եղբայր
լման արիւն է՝ չխնամեան
քայր
որդի
Գ. (3) մասն՝ չխնամենան
որդի
թոռն
Բ. (2) մասն՝ չխնամենան
թոռն
թոռնիայ
Ա. (1) մասն. ասա վճարեցաւ արիւն ազգականութեան, սոքա խնամենան,
թոռնիայ
և սոցա տղայքն առնուն զիրար, որ են ի ներքին տուփսն՝ ձագ թոռնիայքն:
ձուզ թոռնիայքն առնուն զիրար
ձուզ թոռնիայքն առնուն զիրար

(284բ)


Հայր և մայր՝ երկու քերցդ,
և ապոպապ և մամ՝ ձագ
թոռնիայցն:
քոյր
լման արիւն՝
չինամենան
քոյր
որդի
Գ. (3) մասն՝
չինամենան
որդի
թոռն
Բ. (2) մասն՝
չինամենան
թոռն
թոռնիայ
Ա. (1) մասն. աստ
վճարեցաւ արիւն
թոռնիայ
ազգականութեան, ոգա խնամենան,
և ոգցա տղայքն առնուն զիրեար,
որ են ի ներքին տուփսն՝ ձագ
թոռնիայքն:
ձագ
թոռնիայքն
առնուն զիրար
ձագ
թոռնիայքն
առնուն զիրար

(285ա)


Յաղագս ազգակա
Կնքաւորք են Հակոբն և Թորոսն:
հոգևոր նաթեան
որդի
չխնամենան
որդի
թոռն
չխնամենան
թոռն
թոռնիայ
Սոքա խնամենան, զի Գ.(3) զլուխ են, որ
թոռնիայ
ի՛ջին ի կնքաւորացն: Եւ աստ
վճարեցաւ հոգևոր ազգականութիւնն,
սոցա տղայքն առնուն զիրար, որ են
ի ներքին տուփսդ՝ ձագ թոռնիայքդ:
ձագ թոռնիայքն առնուն զիրար
ձագ թոռնիայքն առնուն զիրար

(286ա)


Ցակոբ և Թորոս
կնքառորք են սոցա
որդի
կնքառորջ որդիքս չխնամեան
որդի
թոռն
թոռներս չխնամեան
թոռն
թոռնիայ
թոռնիայքս խնամեան
թոռնիայ
Ամ թոռնիայքս առնան զիրար
Ամ թոռնիայքս առնան զիրար
Ցակոբին պատն
Թորոսին պատն
եղբայր
եղբայր
որդի
որդի
Ցակոբին հայրն
Թորոսին հայրն
եղբայր
եղբայր
որդի
որդի

(286բ)


Կնքահայրն, որ ունի Բ.(2)
սան որիշ որիշ մարդոյ
սան
չխնամենան
սան
որդի
չխնամենան
որդի
թոռն
Խնամենան սոքա
զի թոռունքս սաներուն
թոռն
Գ.(3) գլուխ են, և վճարեցաւ հոգևոր
ազգակցութիւն: Սոքա խնամենան,
և թոռնիայքդ առնուն զիրար որպէս
դրոշմեալ է ի տփերդ:
թոռնիայքս
առնուն զիրար
թոռնիայքս
առնուն զիրար

(288ա)


եղբայր
պապ
որդի
եղբայր
հայր
որդի
սանեղբայր
Թորոսս սան է
Ցակոբս
կնքա հայր է
որդի
թոռն
որդի
սանակցաց որդիքս չխնամեան
թոռն
սանակցաց թոռնեն խնամեան, և թոռնիքդ առնուն զիրար
թոռնիայրս առնուն զիրար
պապ
եղբայր
որդի
հայր
եղբայր
որդի
Պողոսս սան է
սանեղբայր
որդի
որդի
թոռն
թոռն
թոռնիայրս առնուն զիրար

(288բ)


եղբայր
կնքահօր պապ
եղբայր
որդի
որդի
եղբայր
կնքահօր հայր
եղբայր
որդի
որդի
+
+
կնքահայր
սանն հոգևոր որդի
հոգևոր եղբարքս չխնամենան
մարմնաւոր որդի
հոգևոր եղբարքս չխնամենան
սանն հոգևոր որդի
հոգևոր թոռն
չխնամենան
մարմնաւոր թոռն
չխնամենան
հոգևոր թոռն
հոգևոր թոռնիայ
խնամենան
մարմնաւոր թոռնիայ
խնամենան
հոգևոր թոռնիայ
ձագ թոռնիայքն առնուն զիրար
սոքա առնուն զիրար
ձագ թոռնիայքն առնուն զիրար
սոքա առնուն զիրար
ձագ թոռնիայքն առնուն զիրար

(290բ)


Աշտիճանք
ասրինացս
եղեալ պատեալ
եղեալ մամբ
հոր եղբայր մեր
երկու պատեալ
երկու մամբ
մամ բայր եղբեալն
ի եղբ տեսանեցեք
եղբ հոր տեսանեցեք
որ ի պատ տեց
որ ի մամէն
մամ բայր բարձր
մամ բայր բարձր
ի մեր հոր եղբարք
ի հոր եղբարք մեր
մեր հոր եղբայր
եղբայրս պատեն
եղբայրս մամն
մամ բայր մեր
մամ բայր մեր
մամ բայր մեր
ի հոր եղբարքն
ի յեղբս բեն
հոր եղբարս որդի
հոր բայր հոր
պատ
մամ
մամ բայր մամանն
մամ բայր որդի
բայր
մամ բայր
ի յեղ բարն բռ ասեցն
ի յեղ բարն եղբ բառեն
ի յեղ բարն բառեն
եղբարս որդի
եղբայր
հայր
մայր
բայր
բայրք
բարս որդի
բայր
բայր ի բառ ասեցն
որդիք
դստերք
թառուք
թառեալք
առաջին թառ
առաջին թառեալ
որ ի թառանցն
որ ի թառեալցն
երկրորդ ի թառանցն
երկրորդ ի թառեալցն
երրորդ ի թառանցն
երրորդ ի թառեալցն

(291ա)



[1] Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Ձեռ. № 2677, էջ 284 բ:

GOR YERANIAN

THE AVARAGE NUMBER OF ARMENIAN FAMILY MEMBERS ACCORDING TO THE 15TH CENTURY COLOPHONS IN ARMENIAN MANUSCRIPTS

(VASPURAKAN'S EXAMPLE)

SUMMARY

Clarifying the approximate number of population in this or that province is one of the important issues of Historical Demography of Armenia. Sometimes, stating about the cases of captivities and murders, writes only mention the number of families. Therefore, in order to figure out the total number, first of all, it is necessary to find out how many members a family consisted of. Referring to the colophons in Armenian manuscripts written in the 15th century in Vaspurakan, we get the averaged image - a family (parents and children) consisted of six to eight people. Moreover, the death rate was high. In terms of male children, it can be mentioned that 20 percent of them passed away not getting the age of 15-20. What's more, we don't speak about stillbirths which were not rare in the Middle Ages as it is nowadays. Child deaths were mostly due to different diseases which reached higher numbers during wars, famine and epidemic. These phenomena were common for discussed period.

ГОР ЕРАНЯН

СРЕДНЕЕ ЧИСЛО ЧЛЕНОВ АРМЯНСКОЙ СЕМЬИ СОГЛАСНО ЗАПИСЯМ АРМЯНСКИХ РУКОПИСЕЙ XV-ГО ВЕКА

(ПО ПРИМЕРУ ВАСПУРАКАНА)

РЕЗЮМЕ

В исторической демографии Армении одна из самых больших проблем - уточнение численности населения той или иной области. Иногда летописцы, приводя данные о численности населения или о случаях пленения и убийства, ограничиваются числом семей. Следовательно, для получения общего числа необходимо сначала выяснить - из скольких человек состояла семья. Основываясь на записях армянских рукописей, созданных в 15-м веке в Васпуракане, получаем данную усредненную картину: семья (родители и дети) состояла из 6-8 человек. При этом, был высок показатель смертности. Что касается мальчиков, можем констатировать, что около 20% умирали, не дожив до 15-20 лет. Речь не о мертворождении, которое было распространенным явлением в средневековье. Смерть детей в большинстве случаев была следствием разных болезней, масштабы которых увеличивались из-за голода и эпидемий в военное время. Вышеуказанные явления были типичными описуемому промежутку времени.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ադոյան Ա., Հայկական ամուսնա-ընտանեկան հարաբերությունները միջնադարյան օրենքներում, «Պատմա-բանասիրական հանդես», 1965, N 3:

Ակինեան Ն., Շահապիվանին ժողովին կանոնները, հատոր 1, Վիեննա, 1950:

Ակոպով Ա., Տայք. վարչաժողովրդագրական պատկերը XVI դարից XIX դարի առաջին երեսնամյակը, Երևան, 2013:

Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևան, 1973:

Ամիրջանյան Հ., Լոռին XVIII դարի վերջին և XIX դարի առաջին երեսնամյակին, Երևան, 2010:

Անդրանիկ Վրդ. Կոանեան, Բառգիրք հայերէն լեզուի, Պէյրութ, 1998:

Բաղալյան Գ., Վանի վիլայեթ. բնակչության ազգային կազմը Առաջին աշխարհամարտի նախօրեին, «Իրան-նամէ», 1993, թիվ 1:

Բաղդասարյան Է., Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը, Երևան, 1997:

Բարխուդարյան Ս., Հայ կնոջ իրավական վիճակը միջին դարերում, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, N 2:

Գաբամաճեան Ս., Նոր բառգիրք հայերէն լեզուի, Կ. Պոլիս, 1910:

Գրիգոր Տաթեւացի, Գիրք Հարցմանց, Երուսաղէմ, 1993:

Դաւիթ Ալաւկա որդի, Կանոնական Աւրէնսդրութիւն, Մատենագիրք Հայոց, հ. ԺԶ, Երեւան, 2012:

Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, աշխատասիրությամբ Խաչիկյան Լ., Երևան, 1999:

Լալայեան Ե., Միսիան, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1898, N 1–2:

Խաչիկյան Լ., Աշխատութիւններ, հ. 2, Երեւան, 1999:

Կանոնագիրք Հայոց, հ. 1., աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Երևան, 1964, հ. 2, Երևան, 1971:

Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961:

Հալաջյան Գ., Դերսիմի հայերի ազգագրությունը, «Հայ ազգագրություն և բանահյուսություն», հ. 5, Երևան, 1973:

Հակոբ Ղրիմեցի, Տոմարագիտական աշխատություններ, աշխատասիրությամբ Էյնաթյան Ջ., Երևան, 1987:

Հակոբյան Հ., Աղբյուրներ Հայաստանի յեվ Անդրկովկասի պատմության, Ուղեգրություններ, հ. 1, Յերեվան, 1932, հ. 2, 1934:

Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե–ԺԲ դդ., աշխատասիրությամբ Մաթևոսյան Ա., Երևան, 1988:

Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Մաթեվոսյան Ա., Երևան, 1950:

Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, կազմեց Խաչիկյան Լ., Երևան, 1950:

Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԵ դար, Մասն առաջին (1401–1450 թթ.), Երևան 1955, Մասն երկրորդ (1451–1480 թթ.), 1958, Մասն երրորդ (1481–1500 թթ.), 1967, կազմեց Խաչիկյան Լ.:

Հովհաննիսյան Ս., Ամուսնա-ընտանեկան իրավունքը վաղ ավատական Հայաստանում (IV–IX դդ.), Երևան, 1976:

Հովհաննիսյան Ս., Ընտանիքի ձևերը, կազմը և ֆունկցիաները վաղ ֆեոդալական Հայաստանում, «Պատմա-բանասիրական հանդես», 1973, N 1:

Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, Երևան, 2009:

Ղլտչեան Ա., Հայոց հին իրավունքը, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1913, N 1:

Մալխասեանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, հ. 2, Երևան, 1944:

Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Երևան, 1979:

Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. 1, Երևան, 1984:

Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 5, կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1971:

Մելիք-Թանգեան Ն., Հայոց եկեղեցական իրավունքը, Գիրք Ա., Շուշի, 1903:

Մելքոնյան Ա., Էրզրում. Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի առաջին երեսնամյակին, Երևան, 1994:

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. Հմր 954, 5757, 2677, 10137:

Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի, աշխատասիրությամբ Թորոսյան Խ., Երևան, 1975:

Մուրադյան Հ., Կարսի նահանգի վարչաժողովրդագրական նկարագիրը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Երևան, 2006:

Յակոբ Վ. Խրիմեցի, Յաղագս ազգականութեանց բաժանման, Վենետիկ, 1947:

Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, աշխատասիրությամբ Է. Բաղդասարյանի, Երևան, 1995:

Նօտարք Հայոց, հաւաքեալ եւ ի լոյս ածեալ ձեռամբ Ղևոնդ վարդապետի Փիրղալէմեան Տոսբեցւոյ, Կ. Պոլիս, 1888:

Պետրոյան Վ., Սասնա ազգագրությունը, Երևան, 1965:

Djilalli Hadjouis, Mortalité infantile et enfantine et causes de mortalité. L'exemple de la nécropole médiévale d'Ivry-Parmentier 2 (Val-De-Marne, France), Bulletins et Memoires de la Societe d'antropologie de Paris, 1996.

Étienne Gautier et Louis Henry, La population de Crulai, paroisse normande. Étude historique, Paris, PUF, 1958.

Louis Henry, Démographie. Analyse et modèles, Paris, 1984.

Louis Henry et Michel Fleury, Des registres paroissiaux à l'histoire de la population. Manuel de dépouillement et d'exploitation de l'état civil ancien, Paris, INED, 1956.

Isabelle Séguy, La population de la France de 1670 à 1829, L'enquête Louis Henry et ses données, Paris, INED-PUF, 2001.

Карапетян Э., Родственная група «Азг» у армян, Ереван, 1996.

Марр Н., Критика Тексты и разыскания по армяно-грузинской филологии, т. V, СПБ, 1903.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հիշատակարանները որպես պատմական ժողովրդագրության ուսումնասիրության սկզբնաղբյուր 3
Ուսումնասիրության ժամանակագրական և տարածական ընդգրկումը 7
Ընտանիք հասկացությունը միջնադարում 9
Ընտանիքների սոցիալական շերտավորումը 17
Ազգականների թվարկման սկզբունքը հայերեն ձեռագրերի հիշատակարաններում 19
Աղջիկների ու տղաների հիշատակումները հայերեն ձեռագրերի հիշատակարաններում 22
Տղաների և աղջիկների ամուսնության տարիքային շեմը 25
Հիշատակարանների ընտրության և ցանկերի կազմության սկզբունքը 29
Մահացության պատճառները XV դ. Վասպուրականում
Համաճարակ, սով, հիվանդություններ 34
Նահատակություն-մարտիրոսություն 37
Տղաների մահացության ցուցանիշը, ընտանիքում նրանց միջին թվաքանակը..... 40
Ընտանիքում աղջիկների միջին թվաքանակը 43
Ընտանիքի միջին մեծության գործակիցը 45
Ցանկեր 50
Հակոբ Ղրիմեցու «Յաղագս ազգականութեան» երկը 66
«Յաղագս ազգականութեան» 72
Summary 93
Резюме 94
Օգտագործված աղբյուրներ և գրականություն 95

ԳՈՌ ԵՐԱՆՅԱՆ

ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԹՎԱՔԱՆԱԿՆ ԸՍՏ XV Դ. ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ

(ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

GOR YERANIAN

THE AVARAGE NUMBER OF ARMENIAN FAMILY MEMBERS ACCORDING TO THE 15TH CENTURY COLOPHONS IN ARMENIAN MANUSCRIPTS

(VASPURAKAN'S EXAMPLE)

ГОР ЕРАНЯН

СРЕДНЕЕ ЧИСЛО ЧЛЕНОВ АРМЯНСКОЙ СЕМЬИ СОГЛАСНО ЗАПИСЯМ АРМЯНСКИХ РУКОПИСЕЙ XV-ГО ВЕКА

(ПО ПРИМЕРУ ВАСПУРАКАНА)

Համակարգչային ձևավորումը՝ Ն. Ադամյանի
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Ստորագրված է տպագրության 15.12.2015 թ.:
Տպաքանակը՝ 120 օրինակ:

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshall Baghramyan Ave., 0019, Yerevan
http://www.academyhistory.am

[1000դր.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0612688

II
A 105500